Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LGA
1006

1999

43890-4.h.

ԳԱՐՆԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐ

ԿԱՄ

ԾՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱՐԱՆԻ ԳՈԱՎԱՃԱՌ ՅՈՎՍԷՓ ՉՈԱՆԵՍՈՎ

ՓԻՐԲԱՀԻ ԽԱՆ ԹԻՒ 26.

1871

796

28305-62

28. 1007

1006-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր հետեւեալ աշխատասիրութիւնը որ անհատական՝ի լոյս կ՚ընծայենք, խիստ յուսալի է որ Հայ հասարակութեան ամեն մէկ անհատի ընդունելի լինի. վասն զի ազգայնոց մեծագոյն մասը այնքան սիրով ընդունեց մեր առաջ հրատարակած ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ եւ ԳԱՂՏՆԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ անուն աշխատասիրութիւններնիս՝ որքան որ մենք չէինք յուսար՝ի սկզբանէ, կարծելով թէ Հայ ազգին մտաւորական կացութիւնը դեռ խաւարապատ է. մեր այս կարծիքը արդարեւ անհիմն եւ փորձը յայտնեց թէ ամեն Հայ անհատ (բաց ի մէկ քանի հնասէրներէն) այսօր պատրաստ է ընդունիլ եւ խրախուսել որ եւ իցէ հեղինակութիւն որ իւր ընկերական եւ ընտանեկան օգտին եւ երջանկութեանը համար իրեն կ՚ընտրուի. ուստի մենք որ ջանադիր եւ մտադիր եմք ամեն ճշմարիտ սկզբունք հանրածանօրէն քարոզել եւ հետեւաբար ընկերութեան օգտակար եղած ամեն գիտութեանց եւ ուսմանց հրատարակումներ ընել. առջիններէն խրախոյս եւ քաջալերութիւն առած այս անգամ եւս արդի համառօտ, սակայն խիստ օգտակար աշխատասիրութիւններս հասարակութեան կը նուիրեմք առանց ամենեւին տարակոյս ունենալու որ այս ալ առջիններուն պէս ընդունելի պիտի լինի։

Մեր հոգին եւ սկզբունքներս ամենուն յայտնելու համար հարկ է հոս յիշենք որ մենք բացէ՚ի բաց կը մերժեմք մասնաւոր անհատից եւ սովորական դրութեանց վատաբար հնազանդիլը. մեր մի միայն սկզբունքը հանրութեան օգուտն է որոյ ծառայել ինչպէս մինչեւ հիմա, նոյնպէս ալ մինչեւ մեռնիմք(*) պատրաստ

(*) Սոյն գործոյս հեղինակը տակից՝ երեք տարի յառաջ մեռած ըլլալով, նոյնը կատարեց ինչպէս որ խոստացած էր. եւ առաջին տպագրութիւնը սպառած ըլլալով, շուտեցինք մեր ալնիւ բարեկամին աշխատասիրութեան վերջ տալ. ուստի արդի երիտասարդք սոյն տեսակէս մեծամեծ օգուտ քաղելնին տեսնելնիս. երկրորդ տպագրութեան ձեռնարկեցինք առանց որ եւ իցէ բան մը մէջէն փոխելու։

Պանդխտութեան տպագիրներ

ելք. վասն զի խիստ ստորին անասունէ մին ալ ներուաստ է նա՝ որ փոխանակ իւր գտնուած ընկերութեան շահն ու երջանկութիւնը մտածելու, զերի կըլլի անհատի մը և նորա կամացն համեմատ ի՛շարժի. գուցէ (շատ անգամ) 'ի վնաս հանրութեան։ Կարծեմ հարկ չկայ այս անգամ դարձեալ կրկնելթէ մեր այս տեսակ աշխատասիրութիւնները քանի մը տխմարներու կարծածին նման ամենեւին պատճառ չեն կրնար լինիլ երիտասարդական անբարոյականութեան, այլ ընդ հակառակը մինչեւ այսօր այս նպատակաւ բռնուած ամեն ընթացքներէն և միջոցներէն խիստ աւելի զօրաւոր կերպով կրնան առաջնորդել երիտասարդութիւնը այնպիսի դիտութեանց և հմտութեանց, որոց տէր լինելով միայն հնարաւոր է իրենց փրկութիւնը. և ինչպէս որ փոքրիկ տղայ մը կրակէն ի՛զգուշանայ երբ փորձով առաջուց իրեն յայտնուի կրակին կիզիչ զօրութիւնը, նոյնպէս եւ երիտասարդութիւնը պէտի հեռու կենայ իւր հեշտական մոլութիւններէն թէ որ անոնց կենասպառ բնութիւնը իրենց յայտնուի...։

«Որքան ցաւալի է որ մենք առաջ գտնուողները այս սկզբունքս չեն ընդունած» ըսաւ ինձ առջի աշխատասիրութիւններս կարդացող կիս-ապառած ազնիւ երիտասարդ մը հառաջելով. յիրաւի մեծ իրաւամբ ըսաւ նա այս խօսքս, վասն զի թէ որ ասկէ գոնէ քառորդ դար առաջ «Տոլո-ինէ-ներէքը Քացոգրէ-լա» սկզբունքը ընդունուած և 'ի գործ դրուած լինէր փոխանակ «գլաս գինոնինը և շնոնինը մեղք է, ամօթ է» քարոզուելուն՝ հիմայ երիտասարդութիւնը այսքան խեղճ կացութեան մէջ չպիտի գտնուէր։

Սակայն ի՞նչ ընեմք. եղածը եղած է, ուստի աշխատինք որ ասկէց վերջը գոնէ մեր ապագայ սերունդը փրկելու համար հեշտական մոլութեանց ինչ տակալի տվորութիւնք լինելնին հասկընան և ուսանին ամեն երիտասարդ. և կառավարեն ինքզինքնին ինչպէս որ օրինաւոր և վայելուչ է ամեն ազատ մարդու։

ՀԵՂԻՆԱԿՆ

Պատկեր Ա.

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԱՐԴԻ ԸՆԹԱՑՔԸ

«Նա որ մէկ քառորդ դար ուղիղ կը շարժի,
Հարկաւ երեք քառորդ դար ալ պիտի շարժի։
ԱՂԲՕԹ։

Արդարեւ անհնար է ուրանալ թէ Եւրոպա աշխարհիս միւս երեք մասերէն աւելի լուսաւորուած է, և Ամերիկան Եւրոպայէն աւելի. և ոչ ոք կարող է ուրանալ թէ ամեն արհեստ, դիւութիւն և ուսում իրենց արդի կատարելութիւնը Ամերիկայի և Եւրոպայի մէջ դտան. անանկ որ այսօր աշխարհիս մնացեալ ամեն մասերը իրենց կարեւորութեանց մեծագոյն մասը անոնցմէ առնելու պարտաւորեալ են. այս ցաւալի եղելութիւնը որ շատ երկիրներու տընտեսական վիճակը դղրդեց, այն աստիճան յառաջ գացած է այսօր որ Եւրոպայէն և Ամերիկայէն զատ ամեն երկիր չէ թէ միայն իրենց անհրաժեշտ կարեւորութիւնները անոնցմէ ըստանալու ստիպուած են, այլ նաեւ այս պատճառաւ անոնց հետ մէկտեղ այնպիսի տխրութիւններ կան որ, որքան որ հեռի են Ամերիկեան պարկեշտութենէն, նոյնքան ալ վնասակար և չարագուշակ են։

Եւ ամենեւին չեմ կրնար ուրանալ. այլ մանաւանդ կ՚հաւատամ թէ՝ Եւրոպա և Ամերիկա արհեստից, գիտութեանց և ուսմանց մէջ մեզի խիստ օգտակար ծառայութիւններ ըրին, և սակայն զմեզ մեր անտարբերութեան պատիժներէն փրկեցին. սակայն ասոնց հետ միատեղ անհնար է ուրանալ թէ նոքա մեզի շատ մին ալ այնպիսի սովորութիւններ մատակարարեցին՝ որոնք բնաւ ներելի չեն անտեսական օրէնքներու առջին. սովորութիւններ՝ որոնցմով չէ թէ միայն անհատ մը՝ այլ ամբողջ երկիր մը կարելի է յետին աղքատութեան և թշուառութեան հասցնել։

Թողլով մէկդի անհամար ջնջաւակար սովորութիւնները որ (խալբախը) մեր նախնիքներուն գլխէն եկած օրէն յետէ ընդունած ենք Եւրոպայէն և Ամերիկայէն. հիմակուհիմա խօսիմք այն մէկ հատիկ դժոխային սովորութեան վրայ որ կ՚կոչուի Նորաձեւութիւն և տեսնեմք թէ այս Նորաձեւութիւն կոչուած սովորութիւնը քանի աննկարագրելի և անթուելի ապերջանկութեանց և թշուառութեանց պատճառ եղած է։

Նորաձեւութիւնը ինչպէս իր անունէն կ՚հասկըցուի նոր բան սիրել կ՚նշանակէ. և բացատրութիւն կուտայ քաւորդ դարէ հետէ մեր մէջ մտած այն սովորութեան, որով Ա. մեր անձերը չափէ դուրս դեղեցկացնելու դիտաւորութեամբ պարտաւորեալ եմք այնպիսի հանդերձանքներով զարդարուելու որ յարմար լինին ժամանա-

կին ՆՈՐՈՒԹԵԱՆ (մօտա)։ Բ. Կ՚պարտաւորիմք այնպիսի խօսուածքի ոճ մը ունենալ որ ԲԱՐՁՐ և ՓԱՓՈՒԿ լինի։ Գ. այնպիսի վարմունք մը կամ շարժական ընթացք մը որ յարմար լինի սովորական ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ։

Ա. Հանդերձներու նկատմամբ արդարեւ խիստ դժուարին է հոս կամ ինձ համար նշկատագրել թէ որքան թշուառացուցիչ է Նորութեան հետեւիլը. ըստ որում փորձը յայտնած է թէ այս մոլութիւնը ամենահարուստ դերդաստանաց աղքատութեանը և ՎԱՏԱՀԱՄՐԱՒՈՒԹԵԱՆԸ պատճառ եղած է, և մեծ համարձակութեամբ կրնամք ըսել թէ Քաղաքներու մէջ գտնուած աղքատ ընտանեաց մեծագոյն մասը Նորութեան այս ճիւղին պատճառաւ իրենց արդի արտատոչոր չքաւորութեան մէջ ինկած են. իսկ ասկից ալ աւելի համարձակութեամբ կարող եմք ըսել թէ անառակ կանանց խիստ մեծ մասը Նորութեան սիրահարներն են, որոնք իրենց վատահամբաւ ընթացքին մէջ անդամ ալ՝ այս մոլութեան պատճառաւ չեն կարող ազատել աղքատութենէ և թշուառութենէ։

Բ. Այս մոլութեան երկրորդ ճիւղին դալով այսինքն խօսելու Նորութեան. արդարեւ շատ զարմանալու և վշտանալու պատճառներ ունիմք. վասն զի հաղիւ թէ կարելի է երիտասարդ մը կամ օրիորդ մը գտնել որ պարկեշտութեամբ և օրինաւորութեամբ խօսիլ գիտնայ, անանկ որ մարդ կը տարակուսի թէ արդեօք խօսելէ առաջ խորհիլ կամ մի. այս մոլու-

թեան վնասը սա է որ երիտասարդք և օրիորդք ամենեւին մէկզմէկու բաժին չեն կրնար վստահիլ, այլ միշտ կասկած մը կունենան դիմացինուն անկեղծութեանը վրայ, որով և հետեւաբար ճշմարիտ մտերմութիւնը, սէրը և համակրութիւնը անհնար կ'լինի երկու անհատներու սրտերու մէջ գտնուիլը. և ասկից ալ յայտնի է թէ որքան չարիքներ կրնան ծնանիլ. վարպետորդին կամ նորութեան աշակերտը շատ դիւրաւ կրնայ խաբել պարդը և կործանել զայն և թշուառացնել. կամ երկու անհատ որ և իցէ կերպով մէկզմէկ խաբելով կամ մէկզմէկէ խաբուելով թէ ընտանեկան և թէ ընկերական գործի մը կամ վիճակի մը մէջ կրնան մտնել և յետոյ բնականաբար խաբէութիւնը երեւան ելնելով անտանելի թշուառութիւններ յառաջ բերել. քանի քանի պարզ երիտասարդներ օրիորդի մը քաղցրանուագ և զարդարուն խօսուածքներէն հրապուրուելով իրենց կենակից ընտրած և բրած են այնպիսի ճիւաղներ, որոնք հարանութեան քողը վար դրածնուն պէս իրականապէս ինչ լինելնին յայտնած և թշուառացուցած են զանոնք. նմանապէս քանի քանի աղնիւ օրիորդներ երիտասարդաց վարպետ խօսուածքներէն խաբուելով թշուառ և անկրելի կեանքի մը ենշանակ եղած են . . . : Վերջապէս այս մութեան վնասները մի առ մի ստորագրելը անկարելի է, վասն զի անոր պատճառաւ այսօր այնքան տեսակ թշուառութիւններ յառաջ եկած են որ ոչ կարողութիւններս և ոչ ալ տե-

ղերնիս կընդերէ մանրամասնաբար նկարագրել . ուստի այս կէտիս վրայ ալ համառօտ տեղեկութիւններս բաւական թող սեպուի ։

Գ. Ն՞ԷՈՒԵԱՆ ԵՐԻՏԱՍԴ ՃԻՒՂԸ որ արտաքին վարմունքներու նկատմամբ է , այն ալ յիրաւի շուարեցուցած է աշխարհս առ հասարակ . այս մոլութիւնս ալ վատահութիւնը դրեթէ բոլորովին վերցուցած է մեր մէջէն . վասն զի ասով ալ քանի քանի խարդախ մարդիկներ իրենց ճարպիկ եղանակներովն և կերպերովն շատերուն կենացը , ստացուածքին և պատուոյն զբրկանք ըրած են , ինչպէս ոչխարի մորթով ծածկուած գայլերը կ՚ընեն կամ կրնան ընել անմեղ ոչխարաց . այս մոլութեան աշակերտներուն ալ արտաքին երեւոյթներնին և վարմունքներնին այնքան տարբեր են որ հազիւ կարելի է նկարագրել . բայց բաւական է թէ որ մեր նախահարց այս մասին վրայ մեզ աւանդած մէկ խօսքը յիշեմք որ է այս « որդեակ իր առջեւը նայողէն զգոյշ կեցիր » . այսինքն հեռու պահէ ինքզինքդ ամեն անոնցմէ որ խիստ խոնարհութիւն և արբութիւն կ՚ցուցնեն . . . մեծ իրաւամբ խօսած են մեր հայրերը շիտակը . վասն զի փորձն անդամ անոնց այս խօսքը շատ անդամ և շարունակ մեզ յայտնելու վրայ է , մանաւանդ անոնց վրայ որոնք « կրօնքը իրենց անձին շահէն վեր դասող » կուզեն քարոզել կամ ճանչցնել ինքզինքնին ։

Վերջապէս Ն՞ՈՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ ախտը երեք տարբեր և որոշ ճիւղերով այնպիսի ցաւալի հե-

տեւանքներու պատճառ եղած է, որ այսօր անհնար է որոշել իրական դեղեցիկը՝ կեղծ կամ շինծու դեղեցիկէն. ճշմարտախօսը՝ ստախօսէն և անկեղծը՝ կեղծաւորէն, որպէս և հետեւաբար երիտասարդութիւնը այսօր բոլորովին շուարեալ ինչ ընելիքը կորանցուցեր և ուրիշ մոլութեանց ճամբան բռներ է, վասն զի խեղճերը որքան որ կ՚փափաքին ամուսնական և ընտանեկան կեանց մէջ մնալ, նոյնքան ալ կ՚տեսնան երբ կ՚խորհին թէ դուցէ իրենց առած կողակիցը կարծածնուն չափ դեղեցիկ, համեստ և անկեղծ չ՚լինի. նմանապէս երիտասարդուհիութիւնն ինքզինքը կորուսեր է տեսնելով երիտասարդութեան իւր վերայ ունեցած անվստահութիւնը, անանկ որ երիտասարդ մը ինչ եղանակներով ալ որ երթայ օրիորդի մը քով, հարկաւ օրիորդը մեծ իրաւունք պիտի ունենայ նորա անկեղծութեան վրայ չ՚վստահանալու, վասն զի անթիւ փորձեր հաստատած են իդեալական սէրը թէ արտականք անկեղծ չեն... վերջապէս անցեալ ամեն չարիքները որ Նորատիրութեան երեսէն մեր ընկերական վիճակը կրեր է, այսօր այնպիսի դիրքի մը մէջ դրած է դեռաբոյս սերունդը որ հաղիւ կրնան մէկզմէկու վրայ վստահանալ, և հետեւաբար թէ մէկզմէկու խաբուելով և թէ մէկզմէկէ հեռու կենալով ինքզինքնին տուած են այնպիսի մոլութիւններու որոնք օր ըստ օրէ բնաջինջ ընելու վրայ են մարդկային ընկերական շէնքը։

Սիրելի ընթերցող, ցաւալի չէ՞ այս իրողու-

թիւնը, և դու ալ ինձ հետ չես ողբար ասոր վը-
րայ, և չես փափաքիր որ Ներաստիրութեան յա-
ռաջ բերած այս չարիքները վերնան և խափա-
նին. ահ փափաքելի չէ միթէ որ ՊԱՐԶՈՒԹԻՒՆ
կոչուած երկնային սովորութիւնը մտնէ մեր մէ-
ջը և աղատէ զմեզ այս չարագուշակ չարիքէն,
աղատէ երիտասարդութիւնը և իդեական սեռը
այն կենսապատ մղութիւններէն որ միմիայն
Ներաստիրութեան հետեւանքն է թէ ըսեմք՝
չեմք սխալիր... քաղցրիկ Պարզութիւն, ո՞ւր
կարելի է քեզ դտնել արդեօք, մեր երիտա-
սարդները և օրիորդները միթէ մինչեւ ցվերջ
հակակրութիւն պիտի ունենան քեզի դէմ, քե-
զի՝ որ աղբիւր ես ամեն ընկերական և ընտա-
նեական երջանկութիւններու, քեզի՝ որ միայն
կարող ես մեր թշուառութեանց մեծագոյն մա-
սը վերցնել... աւա՜ղ որ երիտասարդք և օրի-
որդք չեն գիտեր Պարզութեան յարգն ու օ-
գուտը. աւա՜ղ որ երիտասարդք և օրիորդք
այսքան փորձերէ վերջը դեռ Ներաստիրութեան
մէջ կ՚փնտռեն իւրեանց երջանկութիւնը. այո՛
ամեն երիտասարդք թէ և շատ լաւ համոզուած
են որ զարդարեալ աղջիկները տեսնուածին չափ
գեղեցիկ չեն, սակայն դեռ նոցա վերայ կընա-
յին զմայլելով իբր եթերական էակի մը վերայ.
որ երկնակամարի մը ամեն գոյներով զարդար-
եալ է. այո՛ երիտասարդք թէ և գիտեն որ
փափկախօս աղջիկները կարծուածին չափ կըրթ-
եալ և համեստ չեն. սակայն դեռ նոցա հետ
կուզեն անցնել իւրեանց օրերը՝ իբր անտառ-

ներ զմայլեցնող տխամներու քով։ Այս երի-
տասարդ.ք թէ և շատ աղէկ հասկցուած են
թէ օրիորդաց արտա.քին նոր քաղա.քավարա-
կան վարմունքները դրաւական չեն անոնց բուն
վարմունքին, բայց և այնպէս դեռ խաբուող-
ներ շատ են անոնցմէ. նմանապէս ալ օրիորդ.ք
երիտասարդաց ամեն արտա.քին երեւոյթները
թէ եւ դիտեն որ կեղծ են, սակայն դեռ հա-
ճելի է իրենց նոր ածիլուած, շրակուած և ե-
զուած մազերով, Ներսութեան յարմար ամեն
զարդարան.քներով, բերաններն ճարպիկ խօս.քե-
րով և վարմունքնին արդի .քաղա.քավարական
ձեւեր ունեցող երիտասարդաց հետ յարաբե-
րութիւն պահելու։

Խեղճ երիտասարդներ և օրիորդներ խնդրեմ
վայրկեան մը կանգ առէ.ք ուր որ է.ք, և միան-
դամ .քննեցէ.ք անցեալը և տեսէ.ք թէ այդ ձեր
բռնած ընթաց.քներնուդ վախճանը ի՞նչ է. տե-
սէ.ք թէ արդեօ.ք կայ ընտանի.ք մը որոյ երկու
գլխաւոր անհատները ձեր արդի ընթաց.քնե-
րովը ամուսնացած և հիմայ երջանիկ լինին . . .
ամենեւին չիկայ, մի պարապ տեղը ժամանակ
վատնէ.ք, եւ ինչ.քա ձեզի այս կէտերուս նկատմամբ
խօսելէս առաջ ամեն.քն աչ.քէ անցուցած եմ և
բնաւ չեմ դատած այնպիսի ընտանի.ք մը որ Ներ-
սասիրութեան հետեւողք և միանգամայն եր-
ջանիկ լինի . . . : Ընտանեկան և ընկերական եր-
ջանկութեանց առաջին և գլխաւոր կորժանիչը
և թշնամին և ամեն տեսակ թշուառութեանց
նախնական շարժառիթը Ներսասիրութիւնն է։

մի տարակուսիք. հաւատացէք իմ խօսքիս որ ձեր բարեկամն եմ և բարեացակամը, և հաւատացէք ինձ նաեւս թէ Պարզութեամբ միայն դուք կրնաք ձեր մտնուած երջանկութիւնը ձեռք անցնել. վասն զի պարզութիւնը այնպիսի յանդամանք մը ունի որ անդորրութիւն, խաղաղութիւն, սէր, երջանկութիւն կ՚ընծայէ ամեն անոնց որք իրեն կ՚աշակերտին. Պարզութեամբ կամ Պարզասիրութեամբ միայն հնարաւոր է ազատիլ խել մը անպիտան և անկարեւոր ծախքերէ. Պարզասիրութեամբ միայն հընարաւոր է պահել բնական գեղեցկութիւնը. Պարզասիրութեամբ միայն կարելի է անկեղծութիւնը. և ասոնցմով հետեւաբար շատ հեշտ և դիւրին է այնպիսի երջանկութիւններ ձեռք անցնել որոնց համար կը հալի՛ք կը մաշի՛ք այժմ հեծելով և հառաչելով։

Երիտասարդ՝ք և օրիորդ՝ք Պարզասիրութեան հետեւեցէ՛ք շուտով տեսնելու այն երջանիկ օրերը որոն՝ք քիչ մըն ալ թէ ուշանա՝ք անհնար պիտի լինի ձեռ՝ք անցնել. երիտասարդնե՛ր դու՝ք որ առատքնէ մինչեւ երեկոյ արիւն քրտին՝ք մոնելով, ուրիշներու ծառայելով, ասդիս անդին վազելով, մէկուն մէկալին աղաչելով, հեծելով, հառաչելով, ստելով, բարկանալով և այլն և այլն քիչ մը ատակ կը շահի՛ք, մի՛ այդ՝քան ալ եւս հետեւի՛ք Նորասիրութեան, դիտցէ՛ք քիչ մընալ ձեր աշխատութեան յարդն ու անձնական արժէ՛քը. խնդրեմ դու՝ք որ շատ անդամ մեծամեծ ցաւեր տեսած է՝ք վայրկեն

օրիորդներէն, ալ դադարեցէ՛ք անոնց խաբ-
ուելէն. հեռացէ՛ք, իմ սիրելի բարեկամներս,
հեռացէ՛ք կաղաչեմ ամեն զարդարուն օրիորդ-
ներէն. մի՛ մօտենա՛ք, մի՛ բարեկամութիւն ը-
նէ՛ք, մի՛ սիրէ՛ք և մի՛ յարգէ՛ք այն օրիորդնե-
րը որ ձեզ հետ փոխանակ պարզասիրութեան
օրէնքներով շարժելնուն՝ փոխանակ պարզ, թե-
թեւ, ժան և մաքուր հանդերձանքներով
տեսնուելնուն՝ ամենաժանր, փառաւոր, շքեղ,
սուղ և դոյնզդոյն կերպարանքներով և ուրիշ զա-
նազան զարդարանքներով կ՚տեսնուին, և փո-
խանակ պարզախօս և պարզաշարժ լինելնուն՝
զանազան վարպետութեամբ և արդի սովոր
քաղաքավարական վարմունքով ձեզ իրենց սեպ-
հականել կ՚ջանան. երիտասարդնե՛ր, խնդրեմ
մի՛ ըսէ՛ք «որքան շատ կը խօսիս և կ՚կրկնես».
վասն զի հաւատացէ՛ք ինձ որ սա ժամանակիս
մէջ եթէ կայ մէկը որ ձեր կացութեան վրայ
ուղիղ տեսութիւն և կարեկցութիւն ունի, ան
ալ ես եմ. ես՝ որ ուխտ ըրած եմ մինչև մեռ-
նիլս ձեր բարեացն համար ամեն ձեռքէս ե-
կածն ընելու, ձեր վտանգները ձեզի յայտնե-
լու և թէ որ կարելի է ձեզ այնպիսի ընթացքի
մը և կացութեան մը առաջնորդելու ուր միայն
հնարաւոր է ձեզ երջանիկ լինիլ։

Եւ դուք օրիորդնե՛ր, ալ դադրեցէ՛ք յարգ-
ընծայելէն Նորաձիրութեան հեռեւող երիտա-
սարդայ. թող անցեալ սերունդը զձեզ համո-
զէ թէ Նորաձիրութեան աշակերտ երիտասարդ-
մը (ինչպէս օրիորդ մի ալ) չկրնար բարի ամու-

սին լինել. չկրնար զձեզ սիրել և հաւատարիմ մնալ. ԶԿՐՆԱՐ... ԱՆՀՆԱՐ է որ Պարզասիրութեան օտար երիտասարդ մը (ինչպէս նաեւս օրիորդ մը) կարենայ դիտնալ թէ սէրն ի՛նչ է. սէրը կ՚փափաքի ՆՈՐԱՍԻՐՈՒԹԵՆԷՆ. սէրը որ մի միայն պարզասիրութեան հետ կրնայ մնալ անբաժանելի կերպով, ուստի դուք եւս կը խընդրեմ իրենց անձնական յարգն ու աշխատութիւններնուն արժէքը չճանաչողներէն յոյսերնիդ կտրեցէք, յամարութիւնիդ պակսեցուցէք, հեռացէք անոնցմէ զզուելով, վասն զի ինչպէս կարելի է որ իւր աշխատութեան յարգն ու անձնական արժէքն չդիտցող երիտասարդ մը դիտնայ ձեր յարգն ու արժէքն, միթէ հընարաւոր բան է որ նոքա իրենց անձէն աւելի ձեզ սիրեն և յարգեն... յիմարութիւն չէ՞ մի այսպէս յոյս մը ունենալ։

Ամեն երիտասարդ և օրիորդ որ այս տեսակս կը կարդայ, թող խորհի միանդամ թէ ո՞րն է նշան և ապացոյց մտաց կատարելութեան և վեհանձնութեան, Նորասիրութիւնը թէ Պարզասիրութիւնը, (թէ որ հնար լինէր այս երկու բառերը իրարու մօտ չպիտի դրէի), տեսէ՛ք մի անգամ լեռնականները և վայրենի մարդիկները որքան սէր ունին կարմիր և նման գոյներուն վրայ, և մեր զանոնք շատ անգամ կոչտ (խրմալը) չե՞ն. անուանէր, և ինչո՞ւ՝ վասն զի, շատ աղէկ կը տեսնեն. թէ նոքա ճըշմարիտ վեհանձնութիւն և մտաց կատարելութիւն չունենալնուն համար է՝ որ վայլուն գոյ-

ներու սիրահար են. ուստի և մեր այս ընթացքը չի հաստատեր թէ Ազգասիրութիւնը կոչտութիւն է, թէ նա վեհանձնութեան և մտայ կատարելութեանը պակասութեան արդասիքն է. ապա ուրեմն ինչու մենք դեռ սիրահար եմք փայլունութեան, հաստատելու համար թէ մենք եւս կոշտ եմք... Ի՛նդաս դուցէ իմ այս բաներուս վրայ, ընթերցող (թէ որ նոր բաներ երիտասարդ մը կամ օրիորդ մի ես) անանկ չէ՞, հոդ չէ՞ ինդաւ, բայց հաստատ դիտցիր որ իմ բաներուս անհերքելի ճշմարտութիւններ լինելը փորձը քեզի պիտի յայտնէ. բայց դուցէ ան ատենը երբ քեզի համար ալ երջանկութիւն և խաղաղութիւն չիկայ։

Երիտասարդներ և օրիորդներ, մտայ կատարելութիւն ստացէք և վեհանձնութիւն, և ձեր երջանկութիւնը պարզասիրութեան մէջ փնտռեցէք, պարզասիրութեան մէջ կըսեմ որ կենաց ամեն դառն հոդերը կը բառնայ մարդուս սրտին մէջէն և ազնութիւն կուտայ նորա. տեսէք ինչպէս պարզասէր են և էին՝ այն ամեն աշխարհօգուտ երեւելի մարդիկները, որ ժամանակ ժամանակ երեւցան և կերեւնան աշխարհիս վերայ. կը հաւատա՞ք ինձ թէ որ ձեզի իմացնեմ թէ հռչակաւորն Կարիպալտիին ամբողջ ձեռ.ք մը հագուստը քսան և վեց ֆրանքի արժողութիւն ունի. Ի՛հաւատա՞ք՝ թէ որ ձեզի ըսեմ թէ Եւրոպայի թագուհիները և թագաւորները և մեծամեծ մարդիկ չափազանց պարզասէր են, ուրեմն իմ սիրելի ընթերցողներս

Պատկեր Բ.

եկէք Պարզասէր եղէք պարզ հաղորդեցէք, պարզ խօսեցէք, և պարզ վարմունք ունեցէք, որոնցմով աւելնայ ձեր յարգն ու արժէքը. այս պատճառով տեղի ունեցած մեծամեծ չարեաց և ապերջանկութեանց առջեւն առնուի, և մարդկային ընկերութեան ձեր այս ընթացքին պատճառաւ կրած զրկանքները վերնան։

Թէ և չէի ուզեր այս գլուխս աւելի երկարել, սակայն և հարկ է ինձ հոս յիշել թէ Պարզասիրութեան պակասութիւնը և Նորասիրութեան տիրապետութիւնն է գլխաւոր պատճառ երիտասարդաց չամուսնանալուն, և մեծ էրաւանք, վասն զի ինչպէս հնարաւոր է որ ամեն տանջանքներով քիչ մը սակ շահող երիտասարդները համարձակին այնպիսի օրիորդի մը հետ ամուսնանալու, որ Նորասիրութեան վարժուած է։ Այո՛ օրիորդք և օրիորդաց ծնողքները ամենեւին պատճառ չունին երիտասարդաց դէմ տրտունջ ընելու և իրենց աղջկանց տունը մնալուն համար դժգոհելու և մանաւանդ զարմանալու, երբ երիտասարդք սակի գումար մը կը խնդրեն իրենց աղջիկները առնելու համար, վասն զի շատ դիւրին է խորհիլ թէ երիտասարդները բաւական խելք ունին մըտածելու թէ՝ եթէ իրենք ամուսնանան այնպիսի աղջկանց հետ որոնք Նորասիրութեան հետեւողք են, հարկաւ շատ նեղութիւններու ենթակայ պիտի լինին զանոնք գոհ ընելու մասին, իսկ այս տեսակ ամուսնութեանց հետեւանքը քայքայելու։ Հարկաւորութիւն չունին քանի

Z 96
28305-62

որ աչքերնուս առջևը այնքան օրինակներ ունենք, որ անհնար է չի տեսանելը։

Ուստի եթէ օրիորդները կը փափաքին որ տունը չի մնան, թող այսօրուընէ անմիջապէս Պարզասիրութեան օրէնքը ընդունին և՝ ի գործ դնեն. ծնողք ևս եթէ կուզեն իրենց աղջիկները ամուսնացնել, թող իրենց առաջին դաստիարակութիւնը լինի իրենց աղջկանց Պարզասիրութիւն ուսուցանել և անոր վարժեցնել... ինչքան դեղեցիկ է այն օրիորդը որ ուժան, թեթեւ, մաքուր և պարզ հանդերձներով զարդարուած. պատկերաց մէջ հրեշտակները լոկ ճերմակներ հագած կը նկարուին որ իմ ըսածս կը հաստատեն. մտաց կատարելութիւն, վեհանձնութիւն և ճաշակ ունեցող երիտասարդը կամ որ և իցէ մարդ՝ զմայլելով կընայի այն օրիորդին, որ Պարզասիրական օրէնքներուն համաձայն զարդարուած է. իսկ հեղնութեամբ և արհամարհանօք կ՝նայի այն օրիորդին վրայ որ Ներասիրական օրէնքներուն համաձայն ամենայն փառաւորութեամբ զարդարուած և ուռած է. հպարտ ինքնահաւան և ծաղրելի սիրամարդի մը նման... ես չեմ քաշուիր նաեւս ըսելու թէ ընդհանրապէս աւելի տգեղ և անկիրթ օրիորդներն են որ Ներասիրութեան կը հետեւին. ինչպէս նաեւս անառակ և փառահամբաւ կիները՝ որ պղծութեամբ վարակած բոլոր ստակնին միշտ փառաւոր հանդերձանքներու համար կ՝մսխեն, և թէ որ չեմ սխալիր ամենէն փառաւոր հանդերձանքներ հագնող

ները, ամենէն լեզուանիները և ամենէն աւելի արդի սոյոր քաղաքակրթական վարմունքները նոքա ունին. իսկ դեղեցիկ և համեստ օրիորդները բնականաբար անտարբեր կ'լինին Ներաստիրութեան, և շատ հետամուտ են Պարզասիրութեան։ Մեր վերոյդրեալ բոլոր խորհրդածութիւններէն ալ պարզ է տեսնել թէ ինչ ընթացք ունին երիտասարդները և օրիորդները և միանգամայն դժուար չէ տեսնել թէ նոցա այս բռնած ընթացքը բաւական է միայն երիտասարդները դիճութեան և անառակ կանանց ձեռքը մատնելու, քանի որ, թէ որ փոխանակ Ներաստիրութեան (որոյ մէջ կ'բովանդակին բոլոր անկարեւոր ծախքերը) Պարզասիրութիւնը (որոյ մէջ կ'բովանդակին ամեն տընտեսական և օրինաւոր խնայողութիւնները) ընդունուած լինէր և երիտասարդք և օրիորդք այս եռքինիս վարժուած լինէին. կրնամ ըսել թէ հիմայ երիտասարդաց և օրիորդաց ինքը տանելորդը՝ արդէն դաւակաց տէր երջանիկ ծնողքներ պիտի լինէին յօգուտ մարդկային ընկերութեան և Հայ ազգին և անտարակուսելի է թէ՝ եթէ Ներաստիրութիւն չի լինէր անառակ կանանց մեծագոյն մասը պիտի փրկուէր։

Ի՛նչ զարմանալի էակ է մարդս, որ թէ և այս աշխարհիս մէջ արարածոց գերագոյնն է, թէ և կատարեալ ազատ է և թէ և երկնից իրեն շնորհած դատողութեան շնորհիւը կարող է չարը բարիէն և օրինաւորը ապօրինաւորէն զատել, սակայն չեմ գիտեր ինչ մեծ, անտե-

սանելի և անմեկնելի ազդեցութեամբ կամ մըղմամբ մը այնպիսի ընթացք մը ընտրած և բռնած է, որ մի միայն իւր ապերջանկութեանը պատճառ կ՚լինի. բոլոր մարդիկ երջանկութիւն կ՚փնտռեն. երջանկութիւնը իրենց ձեռքն է. (երջանկութիւնը բաւականաւորութեան մէջ է) բայց չեմ գիտեր ինչու համար նոքա իւրեանց փնտռածը ձեռք անցնելու և վայելելու համար հարկ եղած միջոցը գործածելուն տեղը, ճիշդ, իւր փնտռածը ձեռքէն հանելու և բոլորովին կորսնցնելու ճամբան բռնած է շարունակ ողբալով թէ «այս աշխարհիս մէջ երջանկութիւն չիկայ»:

«Այս աշխարհիս մէջ երջանկութիւն չիկայ»՝՝՝

Անմարդավայել յիմարութիւն. յիրաւի որ ոչ տիեզերաց Արարչին պատիւ կ՚բերէ և ոչ մարդկութեան: Նախախնամութեան պատիւ չի բերեր, վասն զի այս խօսքով ուրիշ բան չի հասկցուիր, եթէ ոչ խնայնել թէ Աստուած տանջանարանները ստեղծած է մարդս տանջելու համար, մարդս՝ որ ասկից առաջ բան մը չրած չունի Աստուծոյ դէմ, մարդս՝ որ այնքան նուաստ է Աստուծոյ քով, որ հազիւ Աստուծոյ վերհանձնութեանը կիյնայ առանց զբաղոցեցոյն պատճառի մը զայն այնպիսի աշխարհի մը մէջ ստեղծէ որ մինչեւ վերջը տանջուի առանց ամենեւին երջանկութեան հաճի առնելու, և մանաւանդ՝ ասկից առ ալ կ՚հետեւի թէ քանի որ մարդս դեռ Աստուծոյ դէմ բան մը չրած թշուառութեան մատնուած է, ըսել է որ

իւր հանդերձեալ վիճակները լաւագոյն չեն կըրնար լինել . . . բայց չէ , այսպէս չէ իրողութիւնը . աշխարհս երջանկութեան աշխարհ է , բայց մարդս որ ազատ արարած մի է , բնութեան օրէնքներուն յարմար չդալելով կ՚պատժուի , և որովհետև նա չ՚գիտեր թէ ինքն բնութեան դէմ զինելուն համար ապերջանիկ կ՚լինի . անոր համար միշտ « երջանկութիւն չկայ կ՚գոչէ » բայց յուսալի է որ երբ մարդկային ամբողջ սեռը ուսանի բնութեան ամեն օրէնքները և իւր անձին բնութեան հետ ունեցած յարաբերութիւնները՝ ան ատենը « բոլոր տիեզերքի մէջ երջանկութիւն կայ » պիտի աղաղակէ , և ան ատենը պիտի ճանչնայ այն հզօր և մարդասէր էակը որ իւր արարածներուն համար բնաւ տանջանաբաններ ստեղծած չէ և ամենեւին պատճառ չունի ստեղծելու : Տեսանք այս գլխուս մէջ նորատիրութեան տխուր հետեւանքները , ուրեմն արժան և օրինաւոր չէ՞ որ մենք ՝ի սէր մարդասիրութեան ասկից յետոյ ամեն ջանքերնիս ՝ի գործ դնեմք զանի մեր մէջէն հալածելու և պարզասիրութիւնը ամեն տեղ քարոզելու և տարածելու . մի թէ աններելի յանցանք և յիմարութիւն ըրած չպիտի լինիմք թէ որ նորատիրութեան այս քան ճշմարիտներուն և Պարզասիրութեան այնչափ օգուտներուն տեղեակ և համոզուած լինելնուս յետոյ՝ դեռ անտարբերութեամբ կանգնիմք և այս մասին մեզի ինկած պարտաւորութիւնը չկատարեմք . ուստի ամենաանկեղծ թախանձանքով կ՚խնդրեմ այս

տեսրակս կարդացողներէն որ Պարզասիրութեան սկզբունքը և անոր օգտակարութիւնը ամեն տեղ քարոզեն և Ճանան որ Նորասիրութիւնը հալածուի և նախատուի ամեն տեղ և ամենէն . . . ճշմարիտ մարդս ան է որ մարդկային ընկերութեան օգտակար եղած մէկ սկզբունք մը քարոզելու չդանդաղիր ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

“Երիտասարդութեան արդի վիճակը
Մահ է՛ սպառնայ մարդկային շինքին ”

Տեսրակիս առաջին գլխոյն մէջ Նորասիրութեան պատճառաւ երիտասարդայ և օրիորդայ ամուսնանալու անկարող լինելնին յայտնելնուս յետոյ՝ բնականաբար է՛ պարտաւորիմք նոցա արդի կացութիւնը նկարագրել և յայտնել թէ ամուսնութիւնը որքան կարեւոր է, իսկ ամուսնանալէ հետի մնալը որքան վտանգաւոր . . . այս կէտս լաւ մը բացատրելու համար նախ պատաւոր ենք, Երիտասարդայ և Օրիորդայ արդի ցաւալի կացութիւնը նկարագրել ։

Այն օրը երբ մենք Հայ երիտասարդութեան ներքին կացութիւնը քննելու երանք՝ նոցա աղէտալի ախտաւորութիւնը տեսնելով զարհուրանքով մը ափերնիս ճակատնուս զալ կինք և շուարեցանք, ըստ որում ինչ որ չէինք

փափաքեր տեսնել՝ զայն գտանք նորա վերայ, երբեմն որքան որ քիչ մը յոյս ունէինք թէ գուցէ մեր կասկածները և երկիւղները երեւակայական են, սակայն փորձը և քննութիւնը երբ մեր դանել չուզածը առջեւնիս հանելով սրբտերնիս դառնապէս վշտացուց, արդարեւ չէ թէ միայն տպչիլ և շուարիլ՝ այլ քարանալ անգամ օրինաւոր էր մեզ. ինչու որ մեր ըրած քննութիւններէն և հետազօտութիւններէն սա գտանք թէ Հայ երիտասարդութիւնը բոլորովին ոգիտութեամբ ինքզինքը այնպիսի մոլութեանց տուած էր, որոնց քսանմեկի արդասիքները աննկարագրելի են լիովին, վասն զի չէ թէ միայն իմ տկար գրիչս, այլ աշխարհին հին և նոր իմաստասիրաց պերճաբանական կարողութիւնները թէ ունենամ, տակաւին անհնար է որ կարենամ լիովին նկարագրել դիճութեան և հեշտական շայլութեանց արդասիքները. ուստի հոս թող ներելի լինի ինձ ասել թէ մարդս յիշեալ մոլութիւններով չէ թէ միայն իւր կեանքին կեսէն աւելին կ՚կորսնցնէ, այլ մնացեալ կեանքն ալ այնքան տաժանելի կլինի որ մարդ չկրնար երախտագէտ սրտով շնորհակալ լինիլ վերին Ցեսչութենէն իրեն կեանք շնորհած լինելուն համար։

Պէտք է գիտնան ամեն Հայ պատանիք, երիտասարդք և ԶԱՓԱՀԱՍՔ թէ մարդկային շէնքին առաջին և ամենէն գլխաւոր կործանիչը Դիճութիւնն է. Դիճութիւնը՝ որ զանազան ճամբայներով մարդս դէռ պատանի չեղած վրան

յարձակելու կաշխատի. Գիճութիւնը՝ որ իւր ձեռքն անցուցած որսը մինչեւ դերեզման քարշել կ՚փափաքի, Գիճութիւնը՝ որ մարդկային կենդանականութեան ամենէն հարկաւոր և նախնական առողջարար տարերքը ծծելով մարդը կմախք կդարձնէ, և յետոյ մէկ հարուածով մահուան դիրքը կ՚նետէ զայն, զայն՝ որ հազիւ թէ իմացաւ կեանք ունենալը։

Ա՛հ, Գիճութեան աշակերտները և սիրահարները ուր էր թէ մի անգամ խորհէին թէ ի՞նչ կընեն. ուր էր թէ նոքա համոզուէին թէ իրենք իրենց ձեռքերով ինքզինքնին զրկելու վրայ են այնպիսի երջանկութիւններէ և բարոյութիւններէ՝ առանց որոնց կեանքը Սահարայի անապատին և կամ առուցեալ բեւեռներուն պիտի նմանի. ուր էր թէ պատանիք, երիտասարդք և ԶԱՓԱՀԱՍԻՊ ուսանէին թէ իրենք վարդենիի մը կընմանին, կարօտ այն տերեւներուն որ շուք կընեն իւր վերայ արեգակին կիզիչ ճառագայթներէն զինքը պահպանելու համար, և ասոր հետ՝ ի միասին ուսանէին թէ Գիճութեամբ իրենք անձամբ իրենց ձեռուընտրոիմին փրցունելու և նետելու վրայ են զիրենք պաշտպանող տերեւները, որ վերջը արեգակին ամենէն տկար մէկ ճառագայթովը չորնան ու մեռնին. ուր էր թէ ամեն մարդ դիտնար թէ ոգելից ըմպելիքներու դործածութիւնը, որկրամոլութիւնը, մարմինը անմաքուր պահելը, դէշ օդ ծծելը և դէշ ջուր խմելը շատ անգամ մարդկային կենաց հարիւրին քսան տա-

ինները կը կտրեն, իսկ գիճութիւնը հարիւրին քառասուն, յիսուն և շատ անգամ ութսուն տարիները կ՚կտրէ միշտ։ Այո՛, կարելի է որ մարդը առողջապահական ամեն օրէնքներուն դէմ գործէ և ութսուն կամ հարիւր տարիներ կեանք ունենայ, սակայն կենաց ամենէն կարեւոր տարրերը մնիսողը՝ այսինքն գիճութեան հետեւողը, անհնար է որ յիսուն տարիներ ապրի և ասոնց համար յիսուն տարիներ կեանք ունենալն անգամ կամ հրաշք է և կամ բնութեան ամենամեծ մէկ շնորհքը։

Հեշտական շռայլութեան գալով հարկ թէ կրնամ բաւական խօսք դնել հասոզներու իմ ընթերցողներս այս մոլութիւններէն յառաջ գալիք չարիքներուն դառնութեանը, ըստ որում հեշտական շռայլութեամբ ալ մարդկային կենդանական տարերքը կ՚փճանայ և նմանապէս նա որ այս մոլութեան մէջ կ՚գտնուի։

Հոգ չէ թէ մարդ մը ազատ լինի կամ ամուսնացեալ, իւր առաջին խորհելիքը այս մոլութեան դերի չի լիներն է. ազատ մարդ մը իրաւ է որ այս մոլութեամբ միայն ինքզինքը կ՚ապականէ, սակայն ամուսնացեալք իրենց հետ՝ի միասին կիներնին և շատ անգամ ալ զաւակներն կ՚ապականեն. ինքզինքին կ՚ապականեն՝ ատէպ մերձաւորութեամբ. կիներնին կ՚ապականեն՝ նոցա ուզած կամ չուզած ժամանակը զանոնք նեղելով և եղծելով այն գործարանները, որոնց առողջութիւնը իգական կազմութեան համար ամեն բանէ առաջ կարեւոր է, և որոնց ատէպ

մերձաւորութեամբ ենթակայ եղած վատառողջութիւններին ուղղակի կ՚վրդովէ ամբողջ իգական դրութիւնը. զաւակներին կ՚ապականեն շատ անգամ՝ իրենց յղի կինը չափէն և կարեւոր եղածէն աւելի տանջելով։

Ինչպէս որ դիճութիւնը՝ նոյնպէս ալ հեշտական շրայլութիւնը իւր անթիւ վտանգաւոր հետեւանքները ունի, և ամուսնացեալ մարդոց մեծագոյն մասը այս մոլութեան պատճառաւ կ՚մեռնին. ինչու որ ինչպէս ուրիշ անգամ՝ալ ըսած եմք, այս մոլութեամբ մարդուս ջիղերը այնքան կ՚տկարանան՝ որ ալ չեն կարենար բանի մը դիմանալ և հետեւաբար երբ այս մոլութեան ենթակայ եղող մարդ մը դիպուածով մը թէ պաղի՝ ջիղերուն իրեն չօժանդակելովը ատամնքսի, ուղեղի և կամ աղիքներու հիւանդութիւն մը կ՚ստանայ և կը մեռնի։

Ամեն տեսակ հիւանդութեանց միայն երկրորդական պատճառներն են որ կ՚յիշուին առհասարակ, բայց պէտք է դիտնալ թէ դիճութեան և հեշտական շրայլութեան մոլի չեղող մը պաղի ալ կրնայ դիմանալ տաքի ալ, քանի որ յիշեալ մոլութեանց սիրահար մը կամ նոյն մոլութեանց դերի եղող ծնողաց զաւակ մը՝ փոքրիկ պատճառաւ մը շատ ենթակայ է հիւանդութիւններու և մեռնելու. բժշկական բոլոր ճանաչները՝ ի դերեւ հանող հիւանդները ատանք են միշտ... խեղճ բժիշկները իրենց ամեն ճանաչն ու վարպետութիւնը՝ ի դործ կ՚դնեն ունայն տեղը, վասն զի ինչպէս հնարաւոր է որ կէս

մեռած մարդ մը հիւանդանայ և առողջանալու յարմար լինի . . . թէ որ հնարաւոր է փոքրիկ մակոյկի մը մէջ դանուած երկու նաւաստիով ա-հագին պատերազմնայ նաւ մը հոսանքի դէմ տանիլ, հնարաւոր է եւս դիւցազնութեան և հեշտական շռայլութեան մոլի երիտասարդ մը հիւանդանալէն վերջը բժշկական դեղերով բժշկուիլ։

Որքան որ մեզ «ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ» անուն աշխատութիւնս նկարագրելիք Հայ պատանեկութեան և երիտասարդութեան՝ դիւցազնութեան և հեշտական շռայլութեան պատճառաւ ենթակայ եղած խղճալի կացութիւնը, սակայն հիմայ շատ ուրախ ուրախ զանք նոցա վերայ, քան որչափ առաջ մեր ունեցած տեսութիւններս հաղարապատիկ աւելցաւ և պատերնուս նոցա վերայ զգացած կարեկցութիւնը անթուելի կերպով բազմապատկուեցաւ, մանաւանդ որ այս վայրկենիս մէջ մեր ամենէն նախնական և անհրաժեշտ պատուութիւնը ի՛սկայն զանք ամեն հոգ և մտածմունք թողուլ և փութալ արդէն գերեզմանաց մէջ թաւալեալ երիտասարդութեան օգնութեան հասնելու։

Վերոյիշեալ աշխատութիւնս հրատարակած միջոցին՝ որքան որ կը կարծէի թէ երիտասարդութիւնը դիւցազնութեան և հեշտական շռայլութեանց պատճառաւ կենսապատ տուփական և ջղային հիւանդութեանց տէր եղած է, սակայն ամենեւին չէի կրնար երեւակայել թէ արդէն նորա արմատը չորնալ սկսած է և տուփական

հիւանդութիւնք զանի նուաճած և կործանած են. ես կ՚կարծէի թէ յիշեալ մոլութիւնները և հիւանդութիւնները դեռ քիչերը դերած են, բայց չէի կրնալ հաւատալ թէ երիտասարդութեան, պատանեկութեան և չափահասութեան հարիւրին իննսուն և ինը կրենց ժանտահոտ ճիրաններուն տակ ըրած են. բայց երբ ասոնցմէ հարիւրաւորներ շնորհակալութիւններ բերանին ինձ հետ տեսնուեցան՝ տակաւին և ալ անտրակոյս եղայ նոցա աներեւակայելի վտանգաւոր կացութեան մէջ գտնուելնուն, և միանգամայն զգացի թէ եթէ բարերար ձեռք մը զանոնք ազատելու չգար, արեւակեղ վարդենոյ մը նման պիտի ընկճին ոտքս մահուան դառն և դժոխալիր հարուածներուն ներքեւ։

Ա՛հ. կարծես թէ բաւական չէր իմ թափած արտասուքս հազարաւոր պատանեաց և երիտասարդաց լուիկ շիրիմներուն վրայ. կարծես նոցա դիւթութեան և հեշտական շռայլութեան պատճառաւ տարաժամ մահուան մանդաղին ենթակայ լինելնուն համար արտիս կրած կսկիծն ու ցաւը հերիք չէր, ահաւասիկ դողէ-ղայող երիտասարդութիւնը ժանտախտահար ինձ կ՚մօտենայ, և իւր արտասքին խաբէական կերպարանքը մէկդի նետելով իւր չար, թունաւորուած և փտած կնիքը ինձ կ՚ներկայացնէ աղիողորմ հայեցուածքով, օգնութիւն կ՚խնդրէ ինձմէ նա իւր հեշտական թշնամիներէն ազատելու, ըրած կորուստին տեղը լեցնելու, իւր բնական կենդանութիւնը ձեռք բե-

րելու և այս քաղցր կեանքէս իւր իրաւացի բայց կորանցուցած բաժինը առանալու։

Արդարեւ նա որ չմտածէր երիտասարդութեան վրայ, և կարեկցութեան չշարժէր ապրածոց ամենէն ընտիր մասին այս սրտառուչ կացութիւնը տեսնելով ամբարիշտ մը և տարտարոսական ճիւաղ մի է։

Թող լսեն բոլոր ազգայինք թէ Հայ երիտասարդութիւնը խիստ եղկելի կացութեան մը մէջ կ'դտնուի այսօր, և շատ երիտասարդներ որ այսօր ուրախ և զուարթ կերևան՝ վաղն ծրուած դլխով դերեզմանաց մէջ պիտի մտնեն իրենց նախորդներուն նման։ Այո՛, մեր ազգին այս թանկագին մասը որ այսօր նորատունկ ծառի մը նման մեծամեծ յոյսեր կուտան՝ վաղն յանկարծ շանթահար ծառի մը նման պիտի յերկիր տապալին այրած և մոխիր դարձած։

Վերջապէս ԱՆՀՆԱՐ է որ կարողանամ կատարելապէս նկարագրել երիտասարդաց երկիւղալից կացութիւնը, անկարելի է որ բացատրեմ թէ դիճութիւնը և հեշտական շռայլութիւնը ինչպէս ուժգնութեամբ և երադութեամբ չափահասներէն սկսեալ մինչեւ պատանեաց երակներուն մէջ տարածած են իրենց մահահոտ թոյնը. ուստի թող ներելի լինի ինձ այս մասին մէջ ունեցած անկարողութիւնս, և ընթերցողք թող մէկ խօսքէս հազար հասկնալով հարկ եղած կարեկցութիւնը ունենան նորաբոյս սերունդին վրայ։

Բաւական սեպելով երիտասարդութեան տր-

գի կացութիւնը նկարագրելիս, քիչ մըն ալ աչքընկիս այն սեռին վրայ դարձնեմք, որոյ երթէ «ընութեան դերագնիւ ծաղիկ» անունը տամք՝ չեմք սխալիր, և որն որ արական սեռէն կ՝տարբերի իւր կազմական և դիմական գեղեցկութեամբը, փափկութեամբը և մանրութեամբը. եղեւկ որ մարդկային օրէնքներուն անբաւականութեան և ընկերական պարտաւորութեանց պակասութեանց պատճառաւ, մեր երչանկութեան դլխաւոր շարժառիթ եղող այս սեռը այժմ այնպիսի կացութիւն մը ստացած է որ՝ որքան որ անարժէք կընէ զինքը՝ նոյնքան մեծ անպատուութիւն կ՝բերէ մեր վրայ որ ինքզինքնիս անոնց իշխան կարդած եմք... այս երթէ մեք իշխան եմք և կանայք հպատակ, արդարեւ նոցա արդի կացութիւնը տիեզերքին առջեւ զմեզ խայտառակելու չափ կարողութիւն ունի.., բայց թողունք այս կէտիս վրայ քիչ մը ետքը խօսելու, դառնամք այժմ ստորագրել այն դժնդակ վիճակը որոյ նշաւակ եղած է իգական սեռը։

Ստրատիրութեան և շատ մը ուրիշ պատճառներով (որոնց վրայ պիտի խօսիմք այս աշխատասիրութիւններնուս մէջ) երիտասարդութիւնը խորշելով ամուսնական կեանքէն և ինքզինքը տալով անբնական և կենսապատ մոլութիւններու, սկսաւ կամաց կամաց ապօրինաւոր աչքով նայիլ գեղեցիկ սեռին վրայ, և մոռնալով բոլորովին յիշեալ սեռին ազնուութիւնը՝ սկսաւ զանի միայն իւր հաճութեանը,

հեշտական երջանկութեանը համար գործածել։ արական սեռին այս ընթացքը յայնի է թէ ինչ արդարութիւն կունենայ, իգական սեռը տեսնելով թէ ինքը ալ կորսնցուց իւր արժէքը և տեսնելով որ արական սեռը աւելի գեղեցիկին և փառաւորին վրայ համակրութիւն կըզդայ. սկսաւ մտածել դա ալ իւր տնտեսական պարտաւորութիւնները և աշխատիլ որ թէ ալ հեստական և թէ ուրիշ որ և իցէ միջոցներով աւելի գեղեցիկ երեւայ արական սեռին աչքերունն, և վերջապէս ամեն քաղաքակրթեալ օրիորդք այս սովորութեան մէջ այնքան մոլի եղան որ այսօր դրեթէ մեծ մրցում կայ նոցա մէջ թէ արդեօք ո՞րն արհեստի միջոցաւ կրնայ ամենէն գեղեցիկ և հրապուրիչ երեւնալ։

Արդ յայտնի է ամենուն թէ՝ օրիորդաց այսքան նուաստ ընթացք մը ունենալէն ինչ չարիքներ կրնայ արդասաւորիլ. արհեստական այն ամեն միջոցները որոնց դերի եղած են այսօր դրեթէ ամեն օրիորդք. մեծամեծ և կենսապատ արդասիքներ յառաջ բերելու վրայ են ամեն օր, որոնց տխուր պատմութիւնները քիչ անդամ չեմք լսեր. քանի քանի աղջիկներ անդոյրի վատնդաւոր սովորութեամբ չէ թէ միայն բնական գեղեցիկութիւնեն կորուսած են, այլ անոր թռնաւոր բնութենէն կեանքերնին փճացուցած են. լսած ոչուամ պէտք է դիտնալ թէ որ և իցէ նիւթ մը որ կը ծածկէ մեր մարմիններուն մէկ կողմը և կ՝արդիլէ նոյն տեղին

ապրուստնչութիւնը, շատ ինչ ալ կ՚հասցնէ մարմնինուս նոյն մասին. իսկ անդոյրի նման պիղծ և թունաւոր շաղախ մը մեր երեսին վրայ տարածելով՝ տարակոյս չկայ որ դէմքերնուս փափկութեանը եղծուելէն՝ ի զատ՝ անշուշտ պիտի թունաւորիմք ալ. նմանապէս արդեօք քանի դեղահաս օրիորդներ նեղ հանդերձանքներու պատճառաւ դեղեցման մոռած են, Ո՞վ կրնայ չհամոզուիլ նեղ կոշիկներուն ինչպակարութեանը և ոչ՝ չ՚տակար երբ իմանայ քօրսէի ըրած կոտորածները. պէտք է դիտնալ թէ քօրսէ կոչուած տանջանքի գործիքը աղջկան մը փափուկ մէջքը այնքան կը սեղմէ՝ որ անոր բնական ձեւը կանհետացընէ, և հետեւաբար թէ ըստամոքսին, թէ արդանդին, թէ փալրուեան տաշտերուն և ձուարաքներուն նեղութիւն տալով անոնց բնական գործողութեանը արդելք կ՚լինի և շատ անգամ յանկարծական մահ կ՚պատճառէ. կին մը բնականաբար այնպիսի դեղեցիկ և համեմատական շէնք մը ունի որ անկարելի է առանց զմայլելու նորա վրայ նայելը (1). իսկ անոր հակառակ նեղ հանդերձներով և սընդոյրով ինքզինքին դեղեցիկ ցըցնելու աշխատող կիները կամ աղջիկները այնքան կ՚կորսընցընեն իրենց բնական ձեւն որ մարդ տակալով կ՚պարտաւորի նորա վերայ նայիլ, վասն զի այսպիսի արարած մը երեւակայական ճիւաղէ մըն ալ տակալի է (2):

---

(1) Տե՛ս պատկեր առաջին:
(2) Տես պատկեր երկրորդ:

Պատկեր Գ.

Հիմա մեր ընտանիքին յայտնի կ՚տեսնուի թէ իդական սեռը, արական սեռին սէրն ու համակրութիւնը վաստակելու համար այնպիսի միջոցներու դիմած է որ յիշեալ սեռն ալ երիտասարդաց չափ վտանգաւոր կացութեան մը մէջ կ՚դտնուի առողջութեան կողմանէ, և ինչպէս որ երիտասարդք դիճութեան և հեշտական շռայլութեան պատճառաւ, նոյնպէս ալ օրիորդք անդոյրի, նեղ հանդերձանքներու և մանաւանդ Քօրսէի պատճառաւ իւրեանց կենաց մեծագոյն մասը կորսնցընելէն 'ի զատ՝ մնացեալ կեանքերնին ալ անտանելի կ՚ընեն, և դարձեալ ինչպէս որ երիտասարդք իրենց հեշտական մոլութեանց պատճառաւ բարի և օրինաւոր ամուսին լինելու անյարմար կ՚լինին, նոյնպէս եւս օրիորդք իրենց վտանգաւոր և եղծիչ հանդերձանքներովն և զարդարանքներովն բոլորովին անյարմար կ՚լինին ամուսնանալու և ՄԱՅՐ լինելու. մեր այս ընտծը ապացուցանելու համար շատ նեղութիւն չունիմք քաշելու, ինչու որ անթիւ օրինակներ ունիմք առջևնիս համոզուելու համար թէ՝ այն աղջիկները որ Քօրսէի սովորութեամբ իրենց մէջքին ձեւն բնականէն հեռացուցեր են՝ չեն կրնար հանդիսաւ կատարել այն ամեն պարտաւորութիւնները որ իդական սեռէն կ՚պահանջուի, ամենական արեան սովորութիւնը որ դրեթէ առանց նեղութեան կ՚անցընեն բնական կանայք, տաժանելի նեղութիւններով կ՚կատարեն վերոյիշեալ զարդասէր օրիորդները կամ կիները.

յղութեան միջոցը որ դրեթէ անտարբերութեամբ զուարթութեամբ կ՚անցնեն Պարզասէր կանայք, անկրելի տագնապներով և վտանգներով կ՚անցնեն Ներասէր կանայք. և ծննդաբերութիւնը, կամ որդեծնութեան պաշտօնը որ հապիւ զգալով կ՚կատարեն իրենց բնական ձեւը չի եղծող կանայք. անսորագրելի ցաւերով, և շատ անգամ մեռնելով կ՚կատարեն Քօրասէր սիրահարները։

Բայց՝ ի սանցմէ ուրիշ մէկ պատճառ մի ալ կայ որ դեղեցիկ սեռին վիճակը և կեանքը տաժանելի կընէ որոյ վերայ ալ եթէ քանի մը խօսք ընեմք աղէկ կը լինի։

Յայտնի է որ երիտասարդ մը լինչ և իցէ պատճառաւ թէ որ զրկուի ամուսնական կենաց մէջ մտնելէ, զոնէ նա իւր ցանկական կիրքը թէ և ապօրինաւորութեամբ և ցաւալի հետեւանքներով կրնայ յաղեցնել. սակայն աղջիկները որ երիտասարդներէն աւելի պարկեշտ լինել կ՚պարտաւորին, այս մասին մէջ այնքան կը տանջուին որ բաւական բառ չունիմք ստորադրելու. բնութիւնը բոլորովին աննկատ մարդկային էրիպման պատճառաւ սովորականութեան, տիրապետութեան, ժամանակին, (քաղաքականացեալ օրիորդները որ Ներասիրութեան դերի են, շատ անգամ ժամանակէն առաջ արբունքի կ՚հանին, որ շատ վտանգաւոր է իդական դրութեան) իւր օրինաց համեմատ օրիորդները արբունքի կ՚հասցընէ և կիսացնէ նոցա թէ իրենք կնութեան այսինքն յղութեան

եւ որդեծնութեան պարտաւորութիւնը կատարելու պատրաստուելու են. բնութեան այս մղումը այնքան զօրաւոր է որ (ինչպէս անհամար փորձեր ալ յայտնած են) բան մը չկրնար նորա դէմ դնել, քաղաքականութիւնները որ գրեթէ առաջին ազդեցութեան տէրերն են աշխարհիս եւ մարդկային ընկերութեան վրայ, այս մասին մէջ ինչ օրէնքներ ալ որ դրած են՝ օգուտ մը ըրած չունին. բնութիւնը տակաւին անյաղթելի մնացած է անոնց դէմը. սովորութիւնները որ քաղաքականութիւններէն քիչ մը պակաս (երբեմն շատ աւելի) ազդեցութիւն ունին այս մասին մէջ, բոլորովին յաղթուած և խայտառակուած են բնութեան ահարկու հարուածներուն առջեւ. իսկ կրօնքը որ ամենէն աւելի բարձրագլուխ կ'պանծայ մարդկային սեռին վրայ՝ վերահասու լինելով բնութեան զօրութեանը քիչ կամ շատ խոնարհած են անոր առջեւ. վերջապէս որ և իցէ ազդեցութիւնք բնութեան դեղեցիկ սեռին տուած այս պաշտօնը յարդել և մեծարել պարտաւորուած են՝ նորա դէմ ուղղակի և կամ անուղղակի կերպով քիչ մը ժամանակ կենալնուն վերջը։

Արդ բնութեան այս հզօր ազդեցութիւնը երբ առաջին անգամ կ'արթնցնէ օրիորդ մը զանի արբունքի հայնելով, անմիջապէս արտի նոր զգացում մը կ'ծագի նորա մէջ. այսպիսի զգացում մը՝ որով օրիորդը կ'պարտաւորի ուրիշ աչքով նայիլ իւր շուրջը դտնուած այն ե-

բիտասարդաց վրայ, որոնք մինչեւ այս կէտս հաղիւ թէ իրեն համար տարբերութիւն մը ունէին ուրիշներէ. ահա այս է այն նշանաւոր վայրկեանը երբ բնութիւնը օրիորդ մը իր ձեռքը կառնու՝ իր այն նուիրական նպատակը յառաջ տանելու դիտաւորութեամբ, որով միայն հնարաւոր է մարդկային ցեղին գոյութիւնը. արդ խորհիլ օրինաւոր է թէ՝ բնութիւնը իւր այս նպատակը յառաջ տանելու համար ի՞նչ զօրութեամբ պիտի պատերազմի բոլոր տիրական այն միջոցներուն դէմ, որոնք կերպով մը կ՚ջանան իւր այս պաշտօնը արգիլելու, և մանաւանդ իւր ձեռքն անցուցած օրիորդը ո՛րքան պիտի տանջէ՝ երբ տեսնէ նորա կամ անտարբերութիւնը այս մասին մէջ և կամ՝ ի գործ դրած ապօրինաւոր եղանակները... հնարաւո՞ր է արդեօք որ բնութիւնը առանց պատիժի թողու այն աղջիկը՝ որ կամ իւր հրամանին անտարբեր կ՚մնայ և կամ տիրական քաղաքավարութեան պահանջմանց համեմատ՝ ապօրինաւոր միջոցներու ձեռք կ՚զարնէ՝ բնութեան իրեն ազդած սրբազան մղումը յառաջացնելու համար։

Որքան յայտնի է թէ օրիորդները պարտին առաջուց ուսանիլ ինչ որ իրենցմէ կ՚պահանջուի կամ պիտի պահանջուի. միթէ անդութ չէ՞ տիրութիւնը որ զանոնք արգիլելով այս ուսման տեղեակ լինելու կ՚թողու, զանոնք առանձին՝ որ մատաւին բնութեան պահանջմունքներուն դէմ, և կամ ծուռ միջոցներու

գիմեն և դառնապէս պատժուին. մեծ իրաւունք ունի իդեական սեռը արական սեռին և տիրութեան դէմ բողոք բառնալու, ինչու որ այս եռքիններուս պատճառաւ նա տգիտաբար ինքզինքը այնպիսի աղետալի կացութեան մը մէջ դրած է, ուր անկրելի տանջանքներ զինքը կ՝այրեն և կ՝տոչորեն . . .։

Բնութեան ձայնը հզօր է, և. ով որ նորա դէմ կը դրծէ, անպատճառ պէտք է որ պատժուի։ Բնութիւնը չի կրնար զանազանել տգէտն ու գիտունը, այլ ով որ օրէնքներուն չի հնազանդիր՝ կ՝պատժէ . . . թոյնը մարդ կ՝սպաննէ, հոգ չէ թէ խմողը նորա վրայ հմտութիւն կամ գիտութիւն ունի՞ թէ ոչ. այսպէս ալ բընութիւնը ամենեւին չի կրնար և չի պարտիր մտածել թէ իւր օրէնքները եղծողները որոնք են և կամ ինչ պատճառներով կ՝եղծեն. նա չկրնար իդեական սեռը դեղեցիկ, փափուկ և կամ զանազան բռնութեանց պատճառաւ իւր օրէնքները եղծել ստիպուած լինելնուն համար խնայել անոնց. չէ, բնութիւնը Աստուծոյ ձայնն է. նա անփոփոխելի և անդիմադրելի է. ամենայնտին արարածներէն սկսեալ մինչեւ մարդը, գերիներէն սկսեալ մինչեւ թագաւորք, ճիւաղներէն սկսեալ մինչեւ հրեշտակք՝ պարտին Նորա ամեն օրէնքներուն հնազանդիլ՝ թէ որ կ՝փափաքին ազատ մնալ կծու և դաւալի պատիժներէ և երջանիկ կեանք մը վայելել. ուստի իդեական սեռն ալ բնութեան այս աղդեցութեան ներքեւ դտնուած լինելնուն չեն

կրնար ամենեւին այնպիսի պաշտպան մը դրանել որ կարող լինի ազատել զինքը՝ երբ ինքն բնութեան ազդեցութեանց համեմատ այս կամ այն պատճառներով չհնազանդիր։

Արդ մեր վերոգրեալ ճշմարիտ և անհերքելի դիտողութիւններէս յայտնապէս կը տեսնուի թէ մեր Ազգին իդեական մասը՝ սովորութեան պահանջմանց ազդեցութենէն ստիպեալ լինելով բնութեան չի հնազանդիր և կամ թէ ուսանիլ նորա օրէնքները, հարկաւ այսօր նա այնպիսի թշուառ կացութեան մը մէջ դրանուելու է որ խիստ արժանի լինի կարեկցութեան, ըստ որում քանի որ մեր արականքս՝ ամեն ազատութիւն ունիմք մեր ամենազօրաւոր մէկ տենչանքին ուզածնուս պէս յագենում տալու թէ օրինաւորութեամբ և թէ ապօրինաւորութեամբ, և քանի որ իրարու դատան բռնաւորք ստիպած են իդեական սեռը որ սանձ դնէ իւր զգայմանցը և սպասէ մինչեւ որ մէկը զինքը կողակից ընտրէ, շատ պարզ է տեսնել թէ այս իրողութիւնը կամ սովորութիւնը բնութեան ազդեցութեան հետ միանալով պիտի ճնշէ գեղեցիկ սեռը, և թշուառացնէ զայն. մարդկային սեռին այս բռնած ընթացքը օրինաւոր է թէ ոչ, հարկ չիկայ այժմ հոս յիշել. սակայն սա ալ չենք կրնար մոռնալ յիշելու՝ թէ շատ հնարաւոր էր և է որ իդեական սեռն ալ կարենայ իւր այս նուաստ կացութենէն ազատիլ՝ եթէ նա ալ ընդունուի իրր հաւասար ընկեր և օգտակար մաս մարդկային ընկերու-

թեան. այո՛, թէ որ աղջիկները արդիւնաւոր չլինէին արականաց միահաւասար լինելէն՝ այսօր ինչպէս երիտասարդ մը նոյնպէս ալ օրիորդ մը ուզած ժամանակը ամուսնանալու կարող և ազատ պիտի լինէր, որով և պիտի վրկուէր նաև բոլոր այն նեղութիւններէն և ցաւերէն, որոց այսօր անմեղ ենթակայ մը եղած են խեղճ քոյրերնիս և կամ մեր ընկերութեան ազնիւ և գեղեցիկ մասը։

Խեղճ օրիորդներ դուք ամուսնանալու և կամ մարդկային ազգին օգտակար անդամներ լինելու համար այնպիսի հանգամանքներ ունենալու կ՚ապրտաւորուիք որ այժմ արդէն տարուրութեան տիրապետութեան ժամանակ անհնար է ձեզ որ ունենաք, վասն զի քանի որ երիտասարդութիւնը առանց վայրկեան մը կորսնցընելու կ՚փափաքի զձեզ տեսնել փառաւոր և գեղեցիկ, և քանի որ դուք մեծ իրաւամբ (առանց կարօտ լինելնուդ պատճառաւ) անոնց այս փափաքը (համակրութիւնին վաստակելու) կատարելու համար ստիպուած է.ք ձեր բոլոր ժամանակը անձերնիդ վատնելու, նոցա հաճութեան յարմար պատրաստելու, և քանի որ ձեր բոլոր այս ջանքերն ալ շատ անդամ ապարդիւն կմնան, և որովհետև մէկ կողմանէ ալ բնութեան ձեռքը վրանիդ ծանրացած է... ա՜հ, ինչպէս կարելի է ձեզ օրինաւոր ամուսին և մայր լինելու համար, հարկ եղած հանգամանքներն ստանալու համար ժամանակ, միջոց և ՍԻՐՏ ունենալ... ա՜հ երիտասարդ-

ներ, դարձեալ ձեզ դառնալու կ'ստիպուիմ, ձեզ՝ որ չէ թէ միայն ինքզինքիդ կ'սպաննէք զանազան հեշտութիւններով, այլ դեղեցիկ սեռն ալ կ'ստիպէք որ իրենց գլխաւոր պարտաւորութեան պատրաստելու ժամանակ չունենան։

Վերջապէս այս ցաւալի իրողութեանց վրայ ալ առանց երկարաբանութիւն ընելու՝ մեր ընթերցողաց ուշադրութիւնը թախանձանօք կ'հրաւիրեմք մեր ազգին երիտասարդաց և օրիորդաց վրայ, յուսալով որ իրենք եւս մեզ հետ տեսնելով նոցա կարեկցութեան արժանի կացութիւնը, պիտի ջանադիր լինին այնպիսի մարդասիրական աշխատութիւն մը վրանին առնելու որով միայն հնարաւոր է մեր Ազգին արդի սերունդը աղատել մահուան ճիրաններէն և միանգամայն փրկել ապագայ սերունդնիս. ապագայ սերունդնիս՝ որոյ վրայ այժմ ես տակալով կ'նայիմ, և շատ հաճոյացած եմ որ եթէ արդի երիտասարդները և օրիորդները շատ ոչխորդուին օրինաւորութեան, անշուշտ մեծ կորուստ պիտի ընէ մեր ազգը կէս դարէն վերջը, և ունայն պիտի երլեն բոլոր այն ջանքերը որ այժմ մենք 'ի գործ դնելու վրայ եմք իբրեւ յօգուտ ազգային լուսաւորութեան, յառաջադիմութեան և բարեկարգութեան։

Այս գլուխս վերջացնելէս առաջ հարկաւոր կ'սեպեմ այնպիսի սկզբունքի մը նկատմամբ մէկ երկու խօսք ընելու որ՝ քանի որ նա ընդունելի լինի մեզ, անհնար պիտի լինի մեր ե-

բիտասարդաց և օրիորդաց և հետեւաբար ապագայ սերունդներնուս ազատութիւնը և երջանկութիւնը։ Ժամանակէ մը հետէ հետեւեալ սկզբունքը սկսած է մեծ ազդեցութիւն ունենալ, որ է սա «ԴԵՌ ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ»։

Այս յիմարական սկզբունքը որ անշուշտ յեսադիմութեան սիրահարներու մտաց մէկ այլանդակ ծնունդն է, այնքան անհիմն է որ հազիւ թէ մարդ կրնայ հաւատալ թէ խելքը գլուխը և սկզբունքի տէր մէկը կարենայ նորա պաշտպան կանգնիլ, վասն զի քանի որ մարդկային մտաց կարողութիւնը «ազգային քաղաքականութիւն» կոչուած մէկ անորոշ գիտութեան մը մէջ ԲՆԱԿԱՆԱԲԱՐ ամենեւին յառաջ գացած չէ, քանի որ բոլոր անցեալ փորձառութիւնք այս մասին մէջ ամենեւին լոյս մը ձգած չեն ապառնիի վերայ, և քանի որ մարդս այսօրուընէ և այս վայրկեանէս անդին չէ կարող տեսնել, ի՞նչ գլխաւոր պատճառներով կամ մաթեմաթիքական հաշիւներով կըրնայ ճշմարտութեան մը կամ օգտակար սկըզբունքի մը յայտնուիլը ապառնիի թողուիլ։ ոչ կրնայ երբէք գտնուիլ այնքան համարձակ և յանդուգն որ կարենայ զիս ՀԱՄՈԶԵԼ թէ ասկէց մէկ տարի վերջը մեր ազգին վիճակը սա որոշ կացութիւնը պիտի ունենայ. ապա ուրեմն ինչու համար քանի մը դեռ գիտութեանց և բնական արհեստից և ուսմանց վրայ տգէտ եղողներ «դեռ ժամանակը չէ» սկըզբունքը պաշտպանելու և տարածելու եղած

են . . . և ինչ նշանակութիւն ունի իրենց այս քարոզութիւնը՝ քանի որ իրենցմէ ոչ մէկը կարողութիւն ունի ըսելու թէ՝ մեր ազգին վիճակը այսինչ ժամանակ այնինչ կացութիւնը պիտի ունենայ , և քանի որ աշխարհիս պատմութիւնը կը ցուցնէ որ ամեն ճշմարիտ և մարդկային ընկերութեան շահաւէտ սկզբունքները իրենց հրատարակուած օրէն մինչեւ ընդունուած օրերնին դատապարտուեցան և անոնցմէ շատերը մեծամեծ արիւնհեղութիւններու պատճառ եղան . միայն յոյսով ապառող , մաթէմաթիքական կամ տրամաբանական հաշիւներէ վախցող և շարունակ « դեռ ժամանակը չէ » երգը երգողները լսած չունին թէ Քրիստոնէական ճշմարտութիւնը քանի՞ ահարկու կոտորածներու և դայթակղութիւններու պատճառ եղաւ . միթէ յիշեալ ճշմարտութեանը հիմնադիրը չի խորհեցա՞ւ թէ « դեռ ժամանակը չէ » . դարձեալ տան և վերերորդ դարու բարեկարգիչները եթէ մտածէին թէ « դեռ ժամանակը չէ » , պիտի կրնային Եւրոպայի արդի ազատութեան պատճառ լինել . միթէ նոքա չի խորհեցան թէ ժամանակը մէկ դիշերուան մէջ ութսուն հազար մարդաղոհ պիտի պահանջէր իրենց պաշտպանած ճշմարտութիւնը տարածելու համար , եւ այլն , եւ այլն . ուրեմն իմաստակութեան ամենախոյստառակ մէկ սկզբունքը չէ՞ « դեռ ժամանակը չէ » ծիծաղելի խօսքը։

Արդ կը յուսամ որ ամեն ճշմարտասէր ընթերցող աւելի իմ յառաջ բերած սկզբունք-

ներուս ճշմարտութեանը պիտի նային, քան թէ ժամանակին, ժամանակին որ միշտ անորոշ է, և հետեւաբար ամեն անհատ պիտի ջանադիր լինի տարածելու այն սկզբունքները որ այս տետրակիս մէջ յիշուեցան և պիտի յիշուին յօգուտ Հայ ազգին և մարդկային շէնքին։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏՃԱՌՔ ԵՒ ԱՐԳԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

«Կաց թշուառութիւն մը որոյ գլխաւոր պատճառը տգիտութիւնը չլինի։

ԱՆՆԱ ՏՈՒՐԻ

Երիտասարդաց և օրիորդաց բռնած վատագաւոր ընթացքները և նոցա արդի չարադուշակ կացութիւնը բացատրելէս յետոյ՝ բնականաբար այս չարեաց գլխաւոր և երկրորդական պատճառները պարտիմք յայտնել, որպէս զի ամեն զաւակաւէր և Ազգաւէր ընթերցողներս կարենան այս չարեաց առջին առնուլ։

Որովհետեւ ամեն օրինաւորութեան սկզբնապատճառ բնութիւնն է. ուրեմն այս տեսակ և ամեն ապօրինաւորութեանց պատճառները բնութենէն դուրս վնտռելու եմք։

Մենք մեր բոլոր կարողութիւնը 'ի գործ դնելով մեր դերբայս սերունդին արդի երկիւզալից ընթացքին և կացութեանը հետեւեալ պատճառները գտանք որոնց վրայ մի առ մի խօսիլ օրինաւոր է։

Ա. ՏԳԻՏՈՒԹԻՒՆ. Գիտութեանց, ուսմանց

և արհեստից պակասութիւնը, (որ ոգիտութիւն բառով կրնանք հասկնալ՝ այս բառին քաղաքականացեալ աշխարհին առած իմաստը) մարդկային որ և իցէ ընկերութեան համար մեծ յանցանք է. ըստ որում մարդ ուրիշ ամեն արարածներէն աւելի՝ ընկերական լինելով, և իւր վայելմունքները (1) բազմաթիւ հարկ և օրինաւոր է որ նա տեղեակ լինի բոլոր այն գիտութիւններուն, ուսմանց և արհեստից՝ որ ընցմով կ'ընայ թէ երկիրս բարեբեր և թէ իւր ընկերական կացութիւնը ապահով ու երջանիկ ընել, այն իսկ գիտութիւնները, ուսմունքները

---

(1) Խիստ ցաւալի է ասելը որ մարդկային ազգին ենթակայ եղած թշուառութեանց մէկ ամենամեծ պատճառն ալ վայելմանց վրայ ունեցած ծուռ և յիմարական գաղափարն է. այո՛ մարդս քանի որ իւր երջանկութիւնը քարաշէն և փառաւոր տուներու. մետաքսեղէն բազմածախս հանդերձներու, անդամանդներու և ասոնց նման խելամիտ տանջանքներով և վտանգներով ձեռք անցուելիք զարդարանքներու մէջ կը փնտռէ՝ չի կ'ընար ամենեւին երջանիկ լինիլ. քանի որ շատ հնարաւոր էր որ մարդս իւր իրական վայելքները ճանչնալով պարզութեան հետեւէր, որով և վերնար շատ մը թշուառութիւններ ալ՝ որոնց վրայ ոգիտութիւնը կ'նայի իրր այս աշխարհիս սեփհական և վերին տեսչութեան պատուհասները... պատմութիւնը մեզի տան և վեց տարեկան օրիորդը կ'ներկայացնէ որ փափաքած ձեռք մը մետաքսեայ հանդերձը ձեռք չի կ'ընալով անցունել ինքզինքը ըսպաննած է։

և արհեստները որոնց կարեւորութիւն ունի, պէտք է բնական (1) լինին, որպէս զի դոնէ կարենայ դար մը ապրիլ առանց հիւանդ և ապերջանիկ լինելու։

Ցգիտութիւնը, որ մեր ազգին ինկած այսօրուան բաժինն է՝ զինքը այնքան ապերջանիկ ըրած է. որ հազիւ թէ կարելի է նկարագրել, բայց որովհետեւ մեր արդի աշխատասիրութիւնը չի ներէր որ ընդհանուր խօսիմք մասնաւորել կը պարտիմք խօսքերնիս յայտնելու համար թէ մենք մեր անձին վերաբերեալ գիտութեանց և ուսմանց անտեղեակ լինելնուս համար է որ մեր երիտասարդները և օրիորդները ազգային շէնքը բնաջինջ ընելու ընթացքն և կացութիւնն ունին, քանի որ իրողութիւնը ատոր հակառակը պիտի լինէր թէ որ ամեն պատանիք և աղջիկներ իրենց անհատական շէնքին և կազմութեան վրայ լաւ հմտութիւն և իրենց կազմութեան պահանջմունքնե-

---

(1) Եւրոպիոյ և Ամերիկայի բոլոր իմաստասէրները արդէն սկսած են սաստկապէս բողոքել այն ամեն արհեստներուն և գիտութեանց դէմ, որոնք անբնական լինելով մեծամեծ թշուառութեանց պատճառ եղած են. մարդս մինչեւ գերեզման մտնէ պարտի այնպիսի գիտութեանց, ուսմանց և արհեստից հետեւի՝ որոնք իւր երջանկութեանցը արգելք չը լինէն իզաւ նպաստեն նաեւս իւր առողջութեանը և երկարակացութեանը՝ որոնք են միայն մարդկային երջանկութեանց աղբիւրները... «Ինչ օգուտ, եթէ մարդ բոլոր աշխարհը շահի և իւր անձը կորսնցնէ»։

րուն տեղեակ լինէին. խիստ ստոյգ է թէ երի-
տասարդ մը թէ որ գիտնար իւր ներքին և արտա-
քին գործարաններուն կազմութիւնը և կեան-
քը երկար և առողջ լինելու համար անոնց
հարկ եղած հսկողութիւնները, անշուշտ հարիւ-
րին իննսուն պիտի հեռու կենար նա անբնա-
կան ուտելիքներէ և խմելիքներէ և գործո-
ղութիւններէ. Այո՛ պատանի մը երբ ուսանի
թէ իւր ստամոքսը կ'եղծուի ամեն իւղոտ և
արհեստական կերակուրներէ, հարկաւ ետ պի-
տի կանգնի այնպիսի կերակուրներէ որոնք
կաղջուն են, նմանապէս թէ որ նա ուսանի թէ
ծննդական գործարանները իրենց կատարելու-
թեան հասնելու համար գոնէ քսան և չորս տա-
րիներու կարօտ են և թէ անկից առաջ զա-
նոնք գործածելը խիստ մահաբեր արդասիք-
ներու պատճառ կ'լինի, հարկաւ նա հեռու
պիտի կենար գիճութենէ և հեշտական շռայ-
լութիւններէ, ասոնց նման՝ թէ որ աղջիկներն
ալ գիտութիւն ստանային իրենց կուրծքին,
ստամոքսին, ներքին և արտաքին ծննդական
գործարանաց և անոնց պահանջմունքներուն
վերայ, հարկաւ հարիւր օրիորդներէն իննսու-
նը պիտի փրկուէր՝ քօրսէի նման և ուրիշ կեն-
սասպառ գործողութիւններէ, իսկ ընդհակա-
ռակը քանի որ անոտի պարկեշտութիւնը և տո-
վորութիւնը արդեւք կը դնեն այս գիտութեան
տարածմանը, և քանի որ այս պատճառներով
գեռաբոյս սերունդը տգէտ կը մնայ մարդա-
կազմական գիտութեանը, նորասիրութիւնը իւր

ամեն զարհուրելի հետեւանքներովը, դիճուլթիւնը և հեշտական շռայլութիւնը իրենց ամեն ապառիչ արդասիքներովը պիտի տիրապետեն նոցա վերայ, սպաննեն զանոնք, թողլով մեզ որ ողբանք նոցա վերայ շարունակ, և հայհոյեմք Աստուծոյ դէմ ըսելով «Աստուած տուաւ Աստուած առաւ», (1) իբր թէ Աստուած մեզի նման ըրածը չըրածը չիգիտցող մէկն է, որ այսօր կըստեղծէ վաղն մեռցնելու համար. ծնողք կըլնէ մեզ որ արտասուք թափեմք մեր կորսընցուցած զաւակներնուս դիակներուն վրայ։

Այս աշխարհիս մէջ թշուառութիւն չի կայ ամենեւին, մեծ հայհոյութիւն է սոր հակառակ քարոզելը, վասն զի մեր ամեն թշուառութիւններնուս պատճառը մենք ենք. մենք որ մեր անձերուն և բնակած աշխարհքնուս վերաբերեալ գիտութիւններէ խորշելով կը զրկուինք բոլոր այն օրհնութիւններէն որոնք մեր վայելման համար բնութեան իշխանը մեզի տրուած է։

Ալ հարկ չիկայ կարծեմ աւելի խօսիլ այս

---

(1) Այս հայհոյութիւնը շատ անգամ քահանայից բերնէն կ'լսուի որոնք ծնողքները մխիթարելու համար կգործածեն, երբ կերթան նոցա մեռած զաւակներնին գերեզման տանելու. քահանայութիւնը ո՞ւր. մեր տէրպապանները ուր. Աստուած բարի ճանապարհ տայ մեր ազգին, ո՞ր մէկ թշուառութիւնն ինչ ողբանք, չեմ գիտեր թէ դեռ չի՞պիտի ամրջնամք աշխարհիս վրայ ինքզինքնիս իբրեւ ազգ ճանչնալնուս համար։

կէտիս վրայ, վասն զի թէ մեր ըսածներէն և թէ անհամար փորձերէն յայտնի է թէ դեռաբոյս սերունդին արդի ընթացքին և կացութեան միմիայն պատճառը տգիտութիւնն է, տգիտութիւնը՝ որոյ դէմ կամ պէտք է պատերազմ յարուցանեմք և կամ թէ ոչ պարտիմք ընաջինջ լինիլ։

Բ. ԿՂԵՐ. Մեր ազգին այս մասին մէջ ունեցած տգիտութեան պատճառը և հեռեւաբար երիտասարդութեան ցաւալից ընթացքին և կացութեան երկրորդական շարժառիթը եթէ կղերն է ըսենք երբէք սխալած չեմք լինիր, վասն զի մեր կղերը որոյ միմիայն պարտաւորութիւնը իւր հսկողութեանը յանձնուած ժողովուրդին բարեացն և երջանկութեանը համար հարկ եղած խրատները տալ է, այս մասին մէջ այնքան անհոգ և անտարբեր դտնըուած է որ մարդ մեծ իրաւամբ կրնայ նոցա վրայ նայիլ իբր հանրութեան թշնամի և իւր պաշտօնին անհաւատարիմ դտնուող կազմութիւն մը (1)։

---

(1) Շատերը կան որ մեր կղերին այս դատապարտելի անհոգութեանը և անտարբերութեան պատճառը նոցա տգիտութեանը կուտան, այո՛ ես ալ կը խոստովանիմ որ մեր կղերը տգէտ է. բայց սա ալ դիտեմ թէ նոքա իրենց տգիտութիւնը չի ճանչնալէն և չի խոստովանելէն, և շարունակ ինքզինքնին Հայութեան փրկիչ և ազատիչ քարոզելնէն ի զատ, շատ խելացի և վարպետ դտնուած են իրենց անձերնուն ապահովութիւնը, փառաւորութիւնը, հա-

Պատկեր Դ.

Մեր կղերը կը պարտաւորէր մտածել թէ իրենց այս անհոգութիւնը այնքան տակալի և զարհուրելի արդասաւորութիւններ պիտի ունենար, այնքան կոտորածներու պատճառ պիտի լինէր որ օր մը ժողովուրդը արթնանալով երբ տեսնէր իւր երկիւղալից կացութիւնը, հարկաւ իւր մարած աչքերը առաջին անգամ կղերին վրայ պիտի դարձներ և (եթէ ոչ բանիւ գոնէ սրտին մէջ) անէծք պիտի կարդար նորա դէմ, նորա դէմ՝ որ միայն իւր անձին երջանկութեանը համար կղերականութիւն կազմած էր, առանց ամենեւին կարեկցութիւն և գութ ունենալու այն անմեղ ժողովուրդին վերայ որ զինքն իբրեւ իւր առաջնորդը և բարերարը կը ճանչնար և առատութեամբ կը վարձատրէր։

«Մեր պաշտօնը հոգեւոր է» ըսաւ ինձ եպիսկոպոս մը երբ այս կէտիս վրայ իրեն խօսեցայ. «մենք ոչ բժիշկ եմք և ոչ արհեստաւոր» տակայն վերամիտը չի խորհեցաւ թէ ինչ պիտի պատասխանէր ինձ երբ իրեն հարցնէի թէ — մեծդ. եպիսկոպոս ինչպէս հնարաւոր է որ

ըստութիւնը, ճոխութիւնը և իշխանութիւնը պահելու մէջ. տղէտ են այո՛, այլ տակայն շատ աղէկ գիտեն ժողովրդեան տուակները առնուլ, նոցա վրայ իշխել, և բարձր տեղեր նստիլ, ընդհանուր աշխարհականքս չկրցինք մինչեւ այսօր հաւատալ մեր կղերը թէ ինքն տղէտ է և այս պատճառաւ մեծամեծ չարիքներու գլխաւոր պատճառ, չիկրցինք դեռ վարդապետ մը հաւատալ թէ ինքն արժանի չէ Եպիսկոպոսութեան։

ես ոչէտ, անուսումն և պարզ աշխարհական չի տարակուսիմ Քրիստոնէական կրօնին ճշմարտութեանը վրայ, երբ կը տեսնեմ քեզ սէր, դութ և ողորմութիւն քարոզող, և միանգամայն քեզի յանձնուած ժողովուրդին բնաջինջ լինելու վտանգը տեսած ժամանակդ «ես բըժիշկ չեմ» ազաղակող. Այո՛ մեր կղերը միշտ հանդերձեալի վրայ խօսիլ կուզէ, բայց ոչ այս աշխարհիս վրայ, նա միայն «մեղք մի՛ գործէք, բարեգործութիւն ըրէ՛ք» կը պոռայ որ ամենեւին նշանակութիւն չունեցող խօսքեր են, վասն զի պարզ ժողովուրդը ինչպէս կրնայ մեղքի վրայ դադարիար ունենալ՝ երբ կղերը իրեն չի բացատրէր, և նեղը մնալուն պէս «մեղքերդ քաւելու համար բարեգործութիւն ըրէ» կ'ըսէ, չի մտածելով դարձեալ թէ այս քարոզութեամբ չէ թէ միայն ժողովուրդը անցեալ մեղքերուն համար բնութեան տնօրինած պատիժներէն չի կրնար ազատիլ, այլ նաեւս կը շարունակէ իւր մեղքերը, քանի որ իւր կղերէն կ'ուսանի թէ իւր մեղքերը քաւելու համար՝ բարեգործութիւնը կարեւոր է. այո՛, այս ամենահին քարոզութիւնները միայն կը բաւէ ժողովուրդ մը կործանելու, ինչու որ ասով թէեւ ամեն մարդ մէկզմէկու բարի՛ք կ'ընէ, այլ սակայն ամեն անհատական չարի՛քներ անպակաս կը լինին, և կամ ճիշդ այն՛քան մեղքեր կը շատնան՝ որքան որ բարի՛քներ կը գործուին, և շատ հաւանական է որ չարի՛քները թէ թուով և թէ չափով բարի՛քներէն աւելի ծանր լինին, վասն

զի մեր կղերին այս օրուան ըրած քարոզութեանը կամ պաշտպանած սկզբունքին նայելով մարդ մը կրնայ դիճութիւն ընել, հեշտական շայլութեանց հետեւիլ, առել, խաբել, պատրուակել, մէկուն մէկալին տունն աւրել, և վերջը պարզ խաստավանութեամբ մը, ուխտ երթալով մը, քահանային պատարագ մը տալով, Եկեղեցիի մը բան մը նուիրելով և կամ էն շատը անկար աղքատի մը քիչ մը ողորմութիւն ընել և աղաղակ իւր մեղքերէն։

Կղերը կը պարտաւորէր դիտնալ թէ ամեն յանցանք որ կը գործուի երբէք ներելի չէ, այլ բնութիւնը միշտ արթուն է պատժելու ինչ որ իրեն դէմ կը գործուի, և թէեւ լինի որ Աստուած նոյն յանցանքներուն պատիժը չիտայ հանդերձեալ աշխարհի մը մէջ գործողներուն զղջումը ընելով և նոցա վրայ դթալով՝ սակայն բնութիւնը ամենեւին անպատիժ յանցանք մը չի թողուր քանի որ յանցաւորը այս աշխարհս մէջ է, դիճութեան և հեշտական շայլութեանց պատճառաւ զանազան հիւանդութեանց ձեռք մատնուած երիտասարդ մը կրնայ զղջալ ըրածին վրայ, կրնայ քահանային խոստովանիլ, կրնայ ողորմութիւն տալ, կրնայ պատարագ ընել տալ, սակայն ասանկով կրնայ աղատիլ իւր հիւանդութիւններէն, բնութիւնը ասանցմով գոհ կը լինի, և իւր պատիժները կա կառնու, մինչեւ որ նա բնութեան յարմար ճամբով և բժշկական դեղերով ինքզինքը չի դարմանէ և ալ եւս յիշեալ մոլութիւններէն

եւ չի կենայ. Արդարեւ թէ որ մեր կղերը որ-քան որ իւր անձին՝ նոյնքան ալ մեր աշխարհականացու վրայ կարեկցութիւն եւ դութ ունենար, շատ երանելի պիտի լինէինք մենք. վասն զի մենք տխրած լինելով կղերին ամեն մէկ խօսքերը իբրեւ պատգամ ընդունել, որքան հետեւ պիտի փախչէինք մոլութիւններէ, թէ որ կղերը իսնատասիրաբար բացատրութիւն տար մեզ մեղքերուն բնութեանը եւ ինչպէս բարոյական նոյնպէս ալ նոցա բնական վրառանգաւորութեանը վրայ. որ պիտի ուրախանայինք հաւատացեալներ իւր մոլութիւնը շարունակել՝ եթէ կղերը ոչ երբեց բանդերուց բնութեանը եւ ոչ նոցա մարդկային ներքին դրդռտանց վրայ ունեցած դժնդակ եւ կատարեալ ապշեցութիւններուն վրայ բառաբանէր, փոխանակ ԼՈԿ «դիւնեանցութիւնը մեղք է, մի խամէք, հոգ մի՛ տանիր դժոխքը կերթայ» անորոշ եւ ոչ շատ վատահելի քարոզութիւններուն, որոնք շատ ապշեցութիւն չեն կրնար ընել մարդուս մտքին, եւ մեռնելու քանի որ պատիժը դալիք աշխարհը մէջ է, եւ անկից ալ ազատելը բան մը չի՝ քանի որ բարեդրդութիւն եւ զղջում կայ։

Ահաւասիկ այսպէս մեր կղերին անհոգութիւնը պատճառաւ երիտասարդք եւ օրիորդք մեր ազգին ամենէն զօրաւոր եւ քաղցրիկ յոյսերը ինքզինքնին կ՚ապականեն, եւ մենք դեռ ապրատամ կացութեան մը մէջ կանգնած չենք պահանջեր կղերին որ արթնայ եւ պարտաւորութիւնները կատարէ, եթէ ոչ Աստուծոյ եւ

մարդկութեան սիրոյն. այլ գոնէ մեզմէ ընդունած առակներուն և պատիներուն փոխարէն (1)։

Գ. ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Ինչպէս որ ամեն ուրիշ ազգեր նմանապէս մեր ազգն ալ միշտ ազգային կառավարութիւն մը ունեցած է, այլ սակայն եթէ ոչ կղերին, չեմ գիտեր ուրիշ ի՞նչ զօրաւոր պատճառաւ յիշեալ կառավարութիւնը մինչեւ հիմա չէ կարողացեր ուսանիլ իւր պաշտօնին պարտաւորութիւնները, և հետեւաբար այս կամայ և կամ ակամայ, գիտութեամբ և կամ տգիտութեամբ տեղի ունեցած պարտազանցութեան պատճառաւ ազգերնիս իւր արդի խղճալի կացութեան հասած է, վասն զի որ և իցէ ազգային կառավարութեան մը առաջին և գլխաւոր պարտաւորութիւնն է իւր պաշտպանութեանը յանձնուած ժողովուրդին հարկ եղած խնամքն ու հոգն տանիլ, որպէս զի անոնք անպաշտպան և անկառավար մնալով չի ցրուին։ Ժողովուրդ մը ոչխարի հօտի մը կ՚նմանի, և թէ որ հովիւք և շունք նոցա վրայ հարկ եղած հսկողութիւնը չընեն և զանի բարեբեր և խոտալից դաշտերու և մարգագետիններու առաջնորդելու տեղ՝

(1) Եթէ կղեր մը կը քարոզէ զԹուլթլուն և ինքն անզուլթ է՝ մեծ իրաւունք կուտայ ոգէտ և անուսումն ժողովուրդին որ կասկածի կրօնքի ճշմարտութեան վրայ, խորհելով թէ «եթէ կղերին քարոզած կրօնքը իրաւ ճշմարիտ է, հապա ինչո՞ւ ինքն առաջ չի հետեւիր կրօնական պահանջումներուն»։

կամ բոլորովին երեսի վրայ թողուն և կամ զանոնք անքեր և ծայռոտ հողերու վրայ տանին՝ հարկաւ խեղճերը մեծամեծ կորուստներու ենթակայ պիտի լինին, գայլերէն պիտի յափշտակուին, և քաղցրութեան պատճառաւ ամեն դատծնին ուտելով պիտի չարդուին և բնաջինջ լինին։

Արդարութեամբ խօսելով մեր Ազգային հին կառավարութիւնը թէեւ կղերէն շատ աւելի բարիքներ ըրած են Ազգութեան, սակայն արդիւնութիւններնուն պատճառաւ չեն կարողացեր նկատել թէ Հայ ազգը թշուառ ապագայէ մը փրկելու համար ի՞նչ պարտէին ընել, և որովհետեւ մէկ կողմանէ կղերին անտարբերութիւնը և արծաթապաշտութիւնը, և միւս կողմանէ ժողովրդեան իրենց իրաւունքը չի ճանչնալուն համար պահած լռութիւնը՝ իրենց մոռցուցած էին իւր պարտաւորութիւնները, հետեւաբար ինքն ալ չէ թէ միայն պարտականց գտնուած էր, այլ նաեւ սկսեր էր կղերին օրինակին հետեւիլ, և ինքզինքը ընդհանուր ազգին տէր կանգնելու աշխատիլ։

Սակայն այս մասին վրայ երկարաբանելու կարեւորութիւն չի կայ, քանի որ Հայն այժմ ճանչցաւ իւր իրաւունքն և իւր ներքին կառավարութիւնը նաեւ բարեկարգելու ձեռք զարկաւ, և մենք մեծ յոյս ունիմք թէ Ազգային Սահմանադրական կառավարութիւնիս, երբ իւր գործադրութիւնը սկսի, հարկաւ իւր առաջին գործերէն մին ալ դատախազակութեան և կըր-

թութեան այնպիսի եղանակ մը պատրաստել պիտի լինի՝ որով հեշտախառութեանց առջին առնուի մեր երիտասարդաց և օրիորդաց մէջ։

Դ. ԾՆՈՂՔ ԿԱՄ ԽՆԱՄԱՏԱՐՔ. Ծնողք կամ խնամատարք այնպիսի փափուկ պաշտօնի մը կանչուած են որ ամենէն աւելի պատասխանատու լինելու են բնականաբար, ըստ որում ամեն անոնք որ իրր պատուաւոր և ակղբուն քի տէր մարդիկ ամուսնական կեանց մէջ կ՚մտնեն՝ հարկաւ մէկ որոշ և ազդեցութեան տէր լինելու վիճակ մը կ՚ստանան, վասն զի այս վիճակով միայն կրնան իրենց շուրջը տղաքներ, աղջիկներ, թոռներ, հարսներ և փեսաներ եւայլն ունենալ, և հետեւաբար նոցա վրայ մէկ որոշ ազդեցութիւն մը, որուն օրինաւորութեամբ գործադրութիւնը հարկաւ բարի, իսկ ապօրինաւոր գործադրութիւնը չար արդասաւորութիւններ կունենայ, և ան ալ կախումն ունի իւր մտքին և սրտին ունեցած համեմատական վիճակէն։

Ծնողք ամենեւին մոռնալու չեն թէ իրենք են միայն և գլխաւոր պատասխանատու իրենց մէջ սերեալ արարածներուն բարութեանը կամ չարութեանը, (ամեն երիտասարդք և օրիորդք որ պիտի ամուսնանան այս դասս ուսանելու են, և աւելի աղէկ է որ առանց այս պարտաւորութիւնին ճանչնալու ամուսնացող երիտասարդները և օրիորդները ինքզինքին ծոմը ներսեն՝ թէ ինքզինքին և թէ իրենցմէ ծնանելիքները թշուառութիւններէ ազատելու հա-

մար) և կամ նոցա ապատանի երկանկութեանը կամ ապերկանկութեանը . և ուստի ամեն ծը-նողք որ օրհնուած են զաւակներով իրենց առաջին պարտաւորութիւնը սեպելու են նոցա բնական դաստիարակութիւնը , այսինքն ամեն բանէ առաջ զանոնք այնպէս կերակրելու և հագուցնելու են , մաքրութեան և ժուժկալութեան անանկ սովորեցնելու են , որպէսզի նոցա առողջ կացութիւն մը ունենան : Ըստ ս-բուտ պէտք է դիտնալ որ պատանի մը կամ աղջիկ մը մինչև որ բնական առողջութիւն չունենայ , մինչև որ մաքրութեան և ժուժկալութեան սովորած չլինի՝ անհնար է որ բարոյական և մտաւորական կրթութիւններ ստանալու արտամադիր լինի :

Արդ ամեն ծնողք որ կ՚փափաքին իրենց պաշտօնին պարտաւորութիւններուն հաւատարիմ լինիլ և իրենց զաւակներուն երկանկութեանցը պատճառ , պարտին նախ առողջապահական օրէնքներով խնամել զանոնք , որպէս զի նոցա ուղեղը և միտքը առոյգ կացութիւն մը ունենալով բարոյական և մտաւորական դաստիարակութեան կրթութիւն առնելու յարմար լինի (1) : Ինչպէս կ՚ըսէ Ս-Վիշէն «կը-

---

(1) Թէ ծնողք իրենց այս պարտաւորութիւնները ի՞նչպէս կատարելու են քանի որ իրենք տեղեկութիւն չունին իրական կրթութեան վրայ . արդարև այս մասին կրնայի ամեն կարեւոր եղած հրահանգները տալ , սակայն տեսակնուս միջոցը չի-

թութիւնն ալ օրինաւոր ըլլալու համար պէտք է մարդուն ամէն մէկ մասանցը բացուելուն և զարգացմանը ճանք ըլլայ, նախ մարմնոյն առողջութեանը ու զօրութեանը հոգ տարուի»։ Դարձեալ ուրիշ տեղ մը այսպէս կ՚ըսէ, «տղայի մը պզտիկութեան տարիքը աւելի իր մարմնոյն զօրութիւն տալու միջոցներուն միտ դնելու է՝ քան թէ մտքին զարգանալուն»։

Ծնողաց պարտաւորութեանց վրայ մեր կողմանէ այսչափս ըսելնուս յետոյ՝ հիմա քննենք թէ մեր երիտասարդաց և օրիորդաց ծնողքները ինչ ընթացք ունին, և թէ նոքա իրենց արդի ընթացքներովին զաւակներին մտքութեանց տէր չէն մի ըներ։ Յայտնի է ամենուս թէ մեր ծնողքները լիովին անտեղեակ ամուսնական և կենաց ծնողական պարտաւորութեանց, բնականաբար զմեզ ծնած են առանց նպատակի, և հետեւաբար մենք անպատակ ծնուածներս թողուած եմք պարզապէս բերմանց անորոշ, տարտամ և խիստ շատ անգամ վտանգաւոր առաջնորդութեանը. Հայ ծնողաց մեծագոյն մասը ամենեւին ծնողական և ամուսնական պարտաւորութեանց վրայ չէ թէ միայն տեղեկութիւն չունին, այլ նաեւ իրենց զաւակաց ընթացքներովին և յիմարական հսկողու-

---

ներելուն համար Ս-Վիշենեանի մանկատածութիւն անուն դեղեցիկ գիրքը կը ներկայացնեմ ամէն որդեասէր ծնողքներու, ուր այս մասին հարկ եղած ամէն հրահանգ կրնան գտնել։

թիւններուն մինչեւ այնպիսի չարեաց պատճառ կը լինին որ խիստ թշուառ վատառողջ և ապերջանիկ կընեն իրենց զաւակները. Նորատիրութիւնը՝ որուն տխուր արդասի.քները առկից առաջ նկարագրեցին.ք ամենէն աւելի պաշտպանութիւն ծնող.քներէն գտած են. Ծնող.քներէն՝ որոն.ք մեծ ջանասիրութիւն ունին իրենց անմեղ մանկանց արտին մէջ այս մոլութիւնը մըտցընելու, զանոն.ք զանազան տեսակ եւ գոյն զգոյն ժապաւէններով եւ այլն զարդարելով եւ միանգամայն գովեստներ կարդալով անոնց գեղեցկութեանը եւ վայելչութեանը վրայ, առանց երբէ.ք մտածելու թէ իրենց զաւակները ասանկով .քանի մեծնան սիրահար պիտի լինին Նորատիրութեան, նախ ին.քզին.քնին գեղեցիկ եւ վառաւոր ցուցնելու տենչան.քով, եւ յետոյ կամաց կամաց ին.քզին.քնին ուրիշներու հաւնեցընելու փափա.քով. իսկ ասկից ալ յառաջ գալի.ք հետեւան.քները բացատրութեան կարօտ չ'են.

Դարձեալ ծնող.ք մէկ անմեղնելի պատճառաւ մը շատ փափկասէր կ'մեծցնեն զաւակնին, զանոն.ք տա.ք և կակուղ հանդերձներու և անկողիններու սովորեցնելով, որոնցմով որդա.ք .քանի մեծնան՝ այն.քան աւելի փափկասէր կ'լինին և հետեւաբար վատառողջ և հեշտասէր, և ինչպէս կըսէ Ս-Վիշէն «տղին անկողինը ՓԱՓՈՒԿ ՀԱՐԱՅ. բնաւ ծածկոցները ծանր ու հատը ՀԱՐԱՅ ասիկա տղին ՁԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ մը տալու պատճառ կ'ԸՆԱՅ». վասն զի պէտ.ք է դիտնալ թէ տա.ք և կակուղ անկողիններու ստ-

վորոշ տղա.ք՝ չէ թէ միայն իրենց ապառնի կեանաց մէջ միշտ այս սովորութիւններին կ՚փընտրեն, և թէ որ չ՚կրնան վայելել՝ ապերջանիկ կ՚լինին, այլ այս մոլութեամբ տղայոց ջղային կազմութիւնը հարկ եղած զօրութիւնը չ՚ստանալով՝ շատ ենթակայ և պատրաստ կ՚լինին գիճութեան և հեշտական շռայլութեան. ուստի ծնողք նայելու են որ կարելի եղածին չափ իրենց զաւակներին փափկասէր չ՚ընեն, և ասոր համար աղէկ կ՚ընեն թէ որ իրենց զաւակներին կարծր անկողնոյ և թեթեւ հագուստներու վարժեցնեն, որով և անոնց ջիղերուն զօրանալուն պատճառ պիտի լինին, որն որ շատ չարիքներու առջեւն առնելու համար խիստ կարեւոր է մարդկային շէնքին։ Առանց ալ եւս ծնողաց մանրամասն ապօրինաւոր և վտանգաւոր ընթացքներու վրայ խօսելու՝ հիմա քննենք թէ ծնողական արդի հսկողութիւնը օրինաւո՞ր է թէ ոչ. Կան ծնողքներ ընդհանրապէս ապէտ լինելով՝ հետադրդռութիւն կոչուած այն հանգամանքին որ ամենէն փոքրիկ մանուկէն մինչեւ ամենածերունի մարդոց վրայէն չի պակսիր, և որքան որ այս հանգամանքը օրինաւորաբար գործադրելով, շատ օգտակար է. նոյնքան ալ վտանգաւոր՝ երբ ապօրինաւորութեամբ գործադրուի. այնպիսի յիմարական ընթացք մը ունին այս մասին մէջ որ պատանիք և աղջիկներ բնականէն շատ կանուխ կարթնան. վասն զի ինչպէս որ յայտնի է, երբ տղայ մը կ՚արդիլուի աղջկան մը հետ

տեսնուելէ, հարկաւ արդիւնաւոր տղան կամ աղ-
ջիկը պիտի սկսի խորհիլ թէ ի՞նչ պատճառ կայ
իրեն որ չի տեսնուի այն ինչ տղուն կամ աղջ-
կան հետ, և հետեւաբար իւր այս հետաքրքր-
քրութիւնը յագեցնելու համար ամեն ջանք 'ի
գործ պիտի դնէ. և որովհետեւ հրամանը ծը-
նողական է, պիտի ստիպուի անոնցմէ գաղտ ու-
բիշներէ տեղեկութիւն փնտռել, և սանկամ
շատ անգամ պիտի ուսանի այն բանը՝ ինչ որ
չպիտի ուսանէր թէ որ պատանեաց և աղջկանց
մէկզմէկու հետ ունեցած յարաբերութեանց
արդեւք մը չ'լինէր. վերջապէս երկու սեռէ ե-
ղող տղաքները մէկզմէկու հետ խաղալու, խօն-
դալու և աշխատելու են, եթէ ոչ ծնողական
այս յիմարական հսկողութիւնէն մեծամեծ չա-
րիքներու յառաջ գալն անպակաս պիտի լինի.
ես ինքս երբ տան և մէկ տարեկան և կատար-
եալ անմեղ տղայ մնի էի, մեծ համակրութիւն
ունէի մեր դրացին աղջկան հետ, անանկ որ
շարունակ կուզէի որ նորա հետ խաղամ և խօն-
դամ. օր մը կին մը, որ իմ խնամատարս էր,
անխոհեմաբար դուխը խաղցած սենեակիս դռնէն
դռնէն ներս մտցուցած մեզ կը դիտէր. երբ
ես աչքս վերցնելով իրեն նայեցայ՝ մէկէն դը-
ուխը քաշեց և հեռացաւ. այս վոքրիկ ան-
խոհեմութիւնը ստիպեցաւ շարժեց իմ հետա-
քրքրութիւնս, և ուզեցի դիտնալ թէ ի՞նչ
պատճառաւ մեզ կը դիտէր. ուստի անմիջա-
պէս իրեն դիմեցի, և իւր ըրածին բացատրու-
թիւնը խնդրեցի. բայց անմիա խնամատարս

չկրնալով դուշակել իւր ըրածին արդասիքները, փոխանակ ուրիշ բան մը ըսելու, անմիջապէս հրամայեց ինձ որ ԱՌԱՆՁԻՆ յիշեալ աղջկան հետ չի խաղամ. որով և աւելի դրդուեց իմ հետաքրքրութիւնս, և պատճառը հարցնելու ստիպուեցայ. «պատճառը» ըսաւ նա՝ քիչ մը մտածելով, «Այն աղջիկէն ես կ'վախնամ, դուն ատոր հետ մի խաղար». ես հնազանդ տղայ մըն էի, և արդարեւ հնազանդեցայ իրեն, և ալ ես այն աղջկան հետ առանձին չի խաղացի. սակայն սիրտս գոհ չէր, միշտ կուզէի գիտնալ թէ այս արդեօք ինչ պատճառաւ եղաւ, օրերը անցան քայց հետաքրքրութիւնս չանցաւ, և որոշ ժամանակ տարաւոր հատիր ինձմէ մեծ տղայի մը օգնութիւնս խնդրեցի ամէն բան ատոր ցուցուցի, և հարկ չկայ ծանծկերու թէ ամէնքս ուսայ այս մտրութիւնը, որոյ վատնդաւորութեան նկատմամբ կ'աշխատիմ ուրիշներն հասցնելու։

Հոս արժան է յիշել թէ ես ոչ թեւութեան երեսէն շատ վնաս չի տեսնելուս պատճառը իմ մէկ եղբայրս եղաւ, որ անմիջապէս նկատելով իմ վիճակս՝ ամէն հարկ եղած խրատներով զիս ետ կեցուց իմ մտրութենէս. և որոյ երախտիքը յաւիտեան չի պիտի մոռնամ։

Ահաւասիկ այս և ատոր նման ծիծաղելի յիմար հակորութիւնները խիստ շատ անգամ պատճառ կ'լինին երիտասարդաց և օրիորդաց հետաքրքրութիւնը շարժելու, և զանոնք վատնդաւորութեան ենթակայ մտրութենէ ազատելու. ուստի

ծնողք եթէ կ՚փափաքին որ իրենց ապագայ սերունդին թշուառութեանը և ապերջանկութեանը պատճառ չ՚լինին, թող պատանեաց և աղջկանց, երիտասարդաց և օրիորդաց մէկզմէկու հետ ունենալիք յարաբերութեանց դէմ արդելքներ չի դնեն, վասն զի սանելով միայն իրենք պատճառ կ՚լինին նոցա ապօրինաւոր յարաբերութիւններուն։

Հաւանական է թէ ոմանք որ իմ այս խօսքերս կ՚կարդան, պիտի հարցնեն թէ, «Արդեօք ամեն ծնողք ազատ ձգելու են իրենց զաւակները, որ ուզածներնուն հետ տեսնուին և յարաբերութիւն ունենան»։ քաւ լիցի, ես այսպիսի խօսք մը չեմ ուզեր ասել, վասն զի այսքան մեծ ազատութիւն մի ալ երիտասարդները և օրիորդները բոլորովին անբարոյական ընելու կը բաւէ, այլ իմ տալիք հրահանգս սա է այս մասին՝ թէ ծնողք իրենց զաւակները այնպիսի ծնողաց զաւակներուն հետ յարաբերութիւն ընել տալու են, որոնք նաեւս իրենց զաւակաց ճշմարիտ կրթութիւն տալու ջանադիր են. վերջապէս այս կէտիս վրայ մեր ունեցած սկզբունքին հաստատութիւնը սա է, թէ պատանիները և աղջիկները, թէ երիտասարդները և թէ օրիորդները, ոչ բոլորովին ազատ ձգուելու են առանց ծնողական օրինաւոր հսկողութեան, և ոչ ալ անոնց ազատութիւնը բոլորովին խեղդելու է ապօրինաւոր և հետաքրքրութիւն շարժող հսկողութիւններով։

Ասոնցմէ 'ի զատ սա ալ չեմ մոռնար յիշե-

լու որ տղաք ամենեւին իրենց ծնողաց և կամ ուրիշներու քով պառկելու չեն, այլ միշտ առանձին, և եթէ կարելի է զատ սենեակի մէջ, բան որում տղաք ծնողաց քով պառկելով անոնց վատառողջութեանը ենթակայ կ'լինին. վասն զի շատ փորձերով հաստատուած է թէ տկար ծերունի մը երբ առողջ երիտասարդի մը հետ մի և նոյն անկողնոյ մէջ կը պառկի իւր տկարութիւնը նորա կուտայ և նորա առողջութիւնը ինք կ'առնոյ, տղաք մէկզմէկու քով պառկելու չեն որպէս զի թէ իրենց բնական ջերմութիւնը չ'շատնայ և թէ ուրիշ մարմնոյ մէջ չ'ինան. և աղէկ կը լինի թէ որ զատ սենեակի մէջ պառկին և. ասոր պատճառը ծնողք թէ որ քիչ մը մտածեն կրնան գտնել:

Այս տեսակս կարդացող ծնողք արդեօք իմ բառներուս իրաւունք չպիտի տան և գեռ պիտի շարունակեն իրենց արդի ապօրինաւոր ընթացքը, եթէ այսպէս է, ուրեմն մեր ապագայ սերունդը խիստ եղկելի կացութեան մը պիտի հանի. մանաւանդ քանի որ մեր արդի ընկերականութիւնն ալ զանոնք դիւթեան եւ հեշտական շուայլութեան մէջ յառաջացնելու վրայ է, իւր հաղարումէկ սովորութիւններովը որոնց վրայ մանրամասն խօսիլ կարեւոր չէ, վասն զի ամեն մարդ կրնայ վկայել որ թէ առեւտրական եւ թէ ընտանեկան ընկերութիւններուս մէջ այնպիսի գործք եւ խօսք մեր եւ տեղի կունենան որոնց անհրաժեշտ արդասիքը երիտասարդներուն և օրիորդներուն բոլոր մտադ-

բութիւնը մէկ բանի մը այսինքն. ցանկական զգացմանց վրայ ամփոփել է. ոչ չկրնար մտիկաբերել թէ ինչ անթիւ չարիքներ յառաջ գալու վրայ են բոլոր այն պարահանդէսաներուն, գիշերային ժողովներու եւ այլն, եւ այլն, զբօսաւորեաց անկանոնութիւններէն. որոնց սատանան բարի ճանապարհ տայ որ ոչ Եւրոպական են և ոչ Զինական որոնց մէջ ամենէն անմեղ պատանիներ լիսի կանանց որս և կամ պարզամիտ աղջիկներ արիկայ մարդոց զոհ լիներու վրայ են ամեն օր. իսկ ընտանեկան ընկերականութիւններս բնաւ օգտակարութիւն և օրինաւորութիւն չունենալէն 'ի զատ պատանեաց և աղջիկներու համար շատ անդամ վնասակար լիներու վրայ են. վասն զի փառք մինչեւ այսօր 'ի դարձ դրուած ազգային դատարակութեան երբ քանի մը ընտանիք մէկ տեղ մը կը ժողովուին բնաւ օգտակար բանի մը վրայ չխօսիլնուն 'ի զատ, այնպիսի ունայն, և անուտի աբեխոյբեխաբանութիւններ կընեն որ շատ վնասակար արդիւնքներ կունենան երիտասարդաց և պատանեաց վերայ. վասն զի յայտնի է որ պատանիք և աղջիկներ երբ շարունակ զարդարանքներու, վեռացումներու, և ասոնց նման բաներու վրայ անկանոն խօսակցութիւններ կը լսեն, հարկաւ ժամանակէն շատ կանուխ կարթնանան. Իսկ ասոր ալ հետեւանքները արդէն յայտնի են,

Վերջապէս կարծես թէ մեր ազգին ամեն ասկորութիւնները միացած են գիճութիւնը նո-

բասիրութիւնը և հեշտական շռայլութիւնը յառաջացնելու և հետեւաբար ապառնի սերունդներուս համար զարհուրելի ապագայ մը պատրաստելու. ով որ խիղճ ունինէ թող ողբայ ուրեմն մեր քաղցրիկ սակայն արդէն մահուան խաղալիք եղած Ազգերնուս վրայ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԿԵՆԴԱՆԻ ՄԵՌԵԱԼՆԵՐ ԵՒ ՀՐԱՊՈՒՐԻՉ ՀՐԷՇՆԵՐ

Մէկ տհաճելի վիճաբանութիւն մը սրտիս մէջ մնած զիս տագնապելու սկսած է այս գլուխս սկսելէն առաջ, վասն զի խիստ աղէկ գիտեմ որ հանրութիւնը շատ դժուարաւ պիտի ուզէ ինձ հաւատալ երբ իրեն իմացնեմ թէ մեր երիտասարդաց եւ չափահասներնուս շատերը կենդանի մեռեալներ են եւ բնաւ օգտակարութիւն չունին մեր ընկերականութեանը. ըստ որում մեր ազգին արական մասէն գրեթէ ինը տասներորդը դիճութենէ եւ հեշտական շռայլութենէ յառաջ գալիք հիւանդութեանց ձեռքն դերի ինկած են, որոնց մէկ մասը ջղային զանազան տեսակ հիւանդութիւններով կը տանջուին. մէկ մասը Միզանց-քաբորբոքումն ունին, շատերն ալ սերմնահոսութիւն. իսկ մէկ մասն ալ այն ժանտալից Մաշուկական ախտովն բռնուած են որոյ ձեռքէն ազատիլը ԽԻՍ դժուարին է. իսկ մէկ մասն ալ ցաւալի է ըսելը որ վերոյիշեալ ամեն հիւանդութեանց մէկէն տէր

եղած են. անհաւատալի դուցէ կը թուի քեզի այս ըսածս իմ սիրելի ընթերցողս, այնպէս չէ՞. շատ լաւ ուրեմն թէ որ կուզես համոզուիլ ըսածիս անմիջապէս քու խնամատարութեանդ յանձնուած պատանիները, երիտասարդները, քննելու ելիր որ տեսնես թէ անոնց մէջ հատ մը կրնաս գտնել որ այս հիւանդութեանց մէկուն ենթակայ չեղած գտնուին. նմանապէս հարցուր ինքդ.քու ընկերներուդ կացութիւնը, որպէս զի համոզուիս իմ ըսածիս։ Այո՛ իմ սիրելի ընթերցողներս, այո՛ ձենէ շատերը տարակոյս չունիմ թէ յիշեալ ախտերուն կամ մէկին եւ կամ մէկ քանիին ենթակայ եղած է.ք՝ի վնասահանութեան եւ՝ի նախատինս մարդկութեան. ուստի կը խնդրեմ մի՛ խոժոռիք ինձ դէմ երբ զձեզ կենդանի մեռեալներ կը կոչեմ, զի գիտցիք որ սրտիս ցաւն ու կսկիծը այս ածականը ինձ ըսել կուտայ, որպէս զի սթափիք եւ ձեր կացութիւնը տեսնելով ժամ յառաջ դարմանի վազէ.ք և ձեր նախկին առողջութիւնը ստանաք եւ ալ հետու փախչի.ք գիւղութենէ եւ հեշտական շռայլութենէ, մանաւանդ քարշի.ք այն հրապուրիչ ճիւաղներէն որ ամեն տեղ ձեզ ըսպաններու համար տուներ հաստատեր են, եւ որոնց հետ եղած յարաբերութիւններէն յառաջ գալի.ք արդասի.քները անհնար է լիովին նկարագրել. ամենեւին չափազանցութիւն ըրած չպիտի լինիմ թէ որ ըսեմ թէ անառակ կանանց նստած սենեակին մէջ գտնուիլն անդամ վրտանգաւոր է, ըստ որում այն դեղեցկադէմ եւ

հրապուրիչ ժանտախտները ծծած օդերին անդամ կը թունաւորեն. Այո՛ այն հրեշտակատեսիլ հրէշները որ արտաքուստ ամառուան լուսնոյ նման կը փայլին՝ ներքուստ թունաւոր լիժեր են ձեռքերնին ինկած որսը տարտարոսական անդունդներու մէջ դահավիժելու կարող... Երանի նորա որ բնաւ այս ճիւաղներուն հետ յարաբերութիւն չէ ունեցած. իսկ վայ նորա, որ նոցա մէկ ժպիտէն բերկրութիւն մը զգացած է իւր սրտին մէջ։

Արդարեւ կը շուարիմ եւ չեմ գիտեր թէ ինչպէս ստորագրեմ կենդանի մեռեալները եւ հրապուրիչ ճիւաղները. կենդանի մեռեալները որոնք իրենց ցանկական կրից սահմանը չի ճանչնալով զանազան տեսակ հեշտախտութեանց ենթակայ լինելով եւ հետեւաբար նոյն ախտից ձեռքէն ազատելու համար խել մը թունաւոր դեղեր խմելու պարտաւորեալ՝ բոլորովին կերպարանափոխ եղած են... որքան մեծ տարբերութիւն կայ մարդկային բնական շէնքին (1) եւ ասոնց մէջ (2)։

Նմանապէս հրապուրիչ ճիւաղները իրենց շարունակական անառակութեամբը այնքան կերպարանափոխ կը լինին որ մարդ հազիւ թէ կրնայ իւր տակու

բռնել. ուր իդեական աղնիւ սեռին բնական (3) կազմութիւնը, ուր այս ճի-

---

(1) Տե՛ս պատկեր երրորդ։

(2) Տես պատկեր չորրորդ։

(3) Տես պատկեր առաջին։

ուաղներուն կաղմութիւնը (1). իմ սիրելի ընթերցողս, թէ որ անառակ կանանց հետ յարաբերութիւն ունեցող մի ես, խնդրեմ խելքդ գլուխդ հաւաքէ, դատողութիւնդ ձեռք առ եւ ալ եւս մի խաբուիր քու անառակ սիրուհիներուդ արտաքին տեսքին, մի խաբուիր նոցա փառաւոր հանդերձներուն, մի խաբուիր նոցա շուկուած եւ փայլուն մազերուն եւ դէմքերուն, զիարդեր որ նոքա ամենեւին դեղեցիկ չեն... դեղեցկութիւնը բնութեան մէկ ընտիր պարգեւն է, որն որ անպատճառ եւս կառնու անոնցմէ՝ որոնք հեշտական շռայլութեան կ'հետեւին։

Ա՛հ իմ սիրելի ընթերցողներս, կայ արդեօք այնպիսի թշուառութիւն մը աշխարհիս վրայ որ կենդանի մեռեալներուն և հրապուրիչ ճիւաղներուն թշուառութեանը հաւասարի... թշուառ չեն բնաւ զինուորք որ պատերազմի դաշտին մէջ կկենան, զի նոքա հայրենասիրական առաքինութեան նահատակներն են. թշուառ չեն բնաւ նոքա որ մարդասպանութեան պատճառ կախաղան կելլեն, զի նոքա իրենց յանցանքին փոխարէն քանի մը վայրկեան ցաւ կը քաշեն, թշուառ չեն բնաւ աղքատները, զի նոքա դոնէ պատառ մը չոր հաց ուտելնուն վերջը սրտի խաղաղութեամբ կը ննջեն... չէ, թշուառները միայն անոնք են, անոնք՝ որ ոչ առողջութիւն ունին ոչ սրտի խաղաղութիւն եւ ոչ ալ առաքինութիւն. անոնք՝ որ ամեն օր բնութեան

(1) Տես պատկեր երկրորդ։

գ-ժնդակ եւ երկարատեւ հարուածներուն տակ կ՝ճնշուին. անոնք, որ վերջապէս մահն անգամ դառնութեամբ եւ տանջանքներով կ՝ճաշակեն։ Կարեկցութեան շարժիմք ուրեմն այս թշուառներուն վերայ, ձայն բաձրացնեմք իրենց առջեւը եղած ահարկու վիրաւորները իրենց յայտնելու։

Ո՛ կղեր, առաջին պարտաւորութիւնը քու վրադ կ՝ինայ այս մասին. արթնցիր ուրեմն՝ և սէրն Աստուծոյ և մարդկութեան, քարոզիչներ հանէ անառականոցները. և ազատէ այն խեղճ կիները որ զանազան ուրիշ պատճառներէ աւելի տգիտութեան պատճառաւ իրենց արդի ընթացքը բռնած են. ազատէ նաեւ կենդանի մեռեալները խմացնելով նոցա իրենց թշուառութիւնը։

Եւ դուք ծնողքներ, ճանչցէք ձեր անհրաժեշտ պարտաւորութիւնը այս մասին, և այս վարկեանէս սկսեցէք այնպիսի ընթացք մը բռնել որ փրկուի մեր ազգին երիտասարդութիւնը և ապագայ սերունդնիս. Աղերսանքով կ՝դառնամ նաեւ ազգային արդի կառավարութեան և՝ կը խնդրեմ որ նա ալ այս չարեաց առջին առնելու և արդէն թշուառութեան մէջ գտնուողներն փրկելու համար՝ հարկ եղած միջոցներն ձեռք առնու, կղերին իւր պարտաւորութիւնը ճանչցնէ և գործադրել տայ. ամուսնութեան միջոցները դիւրացնէ, Ծորաւորութիւնը ջնջելու միջոցներն ձեռք առնու, և ուսումնական խորհրդոյ մը ձեռամբ մարդակազմութեան և ա-

ռողջաբանութեան դիտութիւնները տարածէ։ դասարաններ և լսարաններ թող հաստատուին ուսմանց և դիտութեանց մէջ Հայ հասարակութիւնը յառաջացնելու որ հետեւաբար ազգիտութեան երեսէն նոցա կրած թշուառութիւնները վերնան։

Ցուսամ թէ մեր տկար գրչին ձայնէն աւելի աղդերնուս արդի կացութիւնը 'ի դուրթ պիտի շարժէ իմ ընթերցողներս, և ամեն անհատ պիտի ճանչնայ իւր ունեցած պարտաւորութիւնները այս մասին մէջ, և իմ աշխատասիրութիւններս պարապ տեղ եղած պիտի չ'լինին։ ոչ ոսկի և փառք չեմ խնդրեր ես, ոչ ալ վաղանցիկ համբաւ, այլ իմ ազգիս՝ իմ սիրելի ազգիս, իմ ԹՇՈՒԱՌ ազգիս փրկութիւնը։ ուրեմն կ'աղաչեմ ամեն ազգային հեղինակներու և ուսումնական բժիշկներու որ ինձ հետ ձայնակցին և ուժ տան իմ առաջարկութիւններուս և աշխատասիրութիւններուս, որով աւելնայ արիութիւնս և չիպարտաւորիմ դլուխս ծռած լռութեան մէջ թաղուելու։

Խօսք կուտամ ընկերական և ընտանեկան օրագիր մը հրատարակելու թէ որ ճշմարիտ ազգասերներէ բաղկացեալ ընկերութիւն մը կազմուի նորատիրութիւնը ջնջելու և պարզասիրութիւնը ազգերնուս սիրելի ընելու, խօսք կուտամ մեր ընկերական և ընտանեկան ամեն տեսակ պարտաւորութիւններուս վերայ շարունակ խօսել՝ և խելմը ճշմարտակար տեսութիւններնիս բացայայտել՝ թէ որ ինձ հետ միանան

քանի մը ճշմարիտ ազգասէրներ և քաջալերութիւն տան ինձ. վերջապէս իմ բոլոր կեանքս միմիայն մեր ընկերական և ընտանեկան բարեացն համար գործածել կ'ուխտեմ թէ որ մասնաւոր ընկերութիւն մը հաստատուի այս նպատակաւ։ Ալ լռեմ ահաւասիկ, յուսալով որ իմ առ ընդհանուր ազգս ըրած աղերսանքս կը լսուի և ես իմ նպատակիս կ'հասնիմ որ է ՀՈՑ ԱԶԳԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՄՏՑՆԵԼ։

ՎԵՐՋ

ԳԱՂՏՆԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ՄԿԶԲՈՒՆՔ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾՆՆԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Այս գիրքս յօրինուած է ամէն ամուսնացեալ և ամուսնանալու միտք ունեցողներու համար. որպէս զի տեղեկութիւն տանալով արական և իգական կազմութեան և նոցա պահանջած օրէնքներուն և խնամքներուն վրայ, խել մը չարիքներ և թշուառութիւններ անհետանան մեր ընկերական կացութեան մէջէն։

ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ԿԱՄ

ՏՈՓԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակս ալ Երիտասարդութեան նուիրուած է. որպէս զի անով կատարեալ տեղեկութիւն ստանան դիճութեան ցաւալի հետեւանքներուն. սերմնահոսութեան միզանց. քարտրբութեան և մաշուղական ախտից վրայ. և միանգամայն հմտութիւն ունենան ամուսնական կենաց պահանջմունքներու։

—Թէ Գաղտնիք բնութեան և թէ Գերեզմանք Երիտասարդաց անուն աշխատասիրութիւններս համար հարիւրաւոր շնորհակալութեան նամակներ ստացած ենք. և խիստ ուրախ եմք յիշելու թէ անոնք մեր յուսացածէն աւելի ծախուեցան և ծախուելու վրայ են որոնք կարդացողները արդէն մեծամեծ օգուտներ տեսան և տեսնելու վրայ են։

Թէ վերոյիշեալ աշխատասիրութիւններս եւ թէ այս տետրակս ամեն դրածներու. քով կը գտնուին. Գաղտնիք բնութեան 10 ղրշ. Գերեզմանք Երիտասարդաց 5 ղրշ. իսկ Գարնան ծաղիկները 4 ղրշ։

Ասոնց ամենքն ալ երկրորդական տպագրութեան վարձքը ստացան։

Spec 104

ՀՀ Ազգային գրադարան
NL0115019